

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

# لويس

LOUYS

*Armenian Monthly*

ISSN 1682-5446

## ՄԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆ



# 205, Նոյեմբեր 2015 թ. No 205, November 2015 شماره ۲۰۵ آذر ماه ۱۳۹۴

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0-1
2- Հայաստան.....	2
3- Արևմտյան Հայաստան.....	7
4- Սփյուռք.....	9
5- Միջազգային.....	10
6- Հասարակական.....	11
7- Մշակույթ.....	27
8- Խոհեր.....	28
9- Գծանկարչություն.....	28
10- Առածանի.....	28

## Պարսկերեն բաժին

11- Հայ գրականություն և մշակույթ.....	1-4
---------------------------------------	-----

**Ճապիկի առաջին էջում՝** Մայր Հայաստան  
**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը  
 Համար 205, Նոյեմբեր 2015 թ.  
 No. 205, November 2015  
 ماهنامه لویس - شماره ۲۰۵ آذر ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

## Մշակութային և հասարակական ամսագիր

Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
 Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան  
 Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդուկյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com  
 Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

### Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

**POBox 15875-9488 Tehran – Iran**

**E-mail : louys\_monthly@yahoo.com**

**Internet : www.louysonline.com**

**Թերթի Գինը՝** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ

**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
 չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
 Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

# Նորին մեծություն Սահմանադրությունը

Կամ ուլքեր են «մարդակենտրոն» փաստաթղթի  
 հեղինակները  
 Երբ կորցնում են բարոյականությունը՝ մնում է օրենքը, երբ  
 կորցնում են օրենքը՝ մնում է սովորույթը: Իսկ սովորույթը  
 բարոյականի արտաքինն է և նրանից սկսվում է  
 այլասերումը:

## Կ. Չարյան

Սահմանադրությունը տասնամյակը մեկ փոխելու  
 սովորույթը, կարծես, դառնում է Հայաստանի անկախ  
 նորօրյա պետականության շարունակականության միակ  
 վկայությունը: Սակայն այս անգամ փոփոխություններն  
 առաջարկում են, ինչպես ընդունված է սակ, մասնագետները՝  
 ի դեմս Սահմանադրական դատարանի նախագահի Գագիկ  
 Հարությունյանի ղեկավարած մասնագիտական  
 հանձնաժողովի: Հիմնական օրենքի նախագծի հեղինակները  
 շարունակ պնդում են, թե իրենց առաջարկած, ըստ էության,  
 նոր Սահմանադրությունը մարդակենտրոն է: Չփորձելով  
 խորանալ առաջարկվող փաստաթղթի բովանդակության մեջ՝  
 փորձենք հասկանալ, թե ուլքեր են մեզ առաջարկում  
 «մարդակենտրոն» սահմանադրություն:  
 Հայաստանի 1995- ի Սահմանադրությունն իր առաջին լուրջ  
 փորձությունն անցավ արդեն մեկ տարի հետո՝  
 նախագահական ընտրությունների ժամանակ: Ինչպես  
 անցկացվեցին այդ ընտրությունները մի հարց է, բոլորովին  
 այդ հարց է, թե ինչպես այն քննության առնվեց  
 Սահմանադրական դատարանում, որի անդամները, նույն այդ  
 Սահմանադրության «արդարադատություն  
 իրականացնելիս... անկախ են և ենթարկվում են միայն  
 օրենքին»: Իհարկե, խոսքերը շատ գեղեցիկ են, բայց ՄԳ  
 անդամները պետք է մի բան անեին, որ ԿԸՀ վերջնական  
 պաշտոնական արձանագրության մեջ առկա 22 հազարից  
 ավելի անճշտությունները, որոնք էսպես ազդում էին  
 ընտրությունների արդյունքների վրա, ինչն արձանագրված  
 էր նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության  
 հայտարարության մեջ, ինչ- որ կերպ բացատրեին: Թեև  
 օրենքով ընտրությունների փաստական հանգամանքները  
 քննելու իրավունք ՄԳ- ն չունեին, բայց ինչեք չես անի, ու դեռ  
 անելու ես, միայն թե փտահոյություն չվարկող  
 ընտրություններն անվավեր չհամարես: Դրա համար պետք  
 էր Երեւանում թվերը ճշտել, դատարանի դահլիճում Գագիկ  
 Հարությունյանը պետք է մատ թափ տար Երեւանի  
 ընտրական հանձնաժողովի երիտասարդ նախագահի վրա,  
 ու... դրվեր Սահմանադրության՝ սովորույթի ուժով  
 չզոդության սկիզբը:





Դրանից հետո արդեն եւ 2003- ին, եւ 2008- ին Սահմանադրական դատարանը արդեն նախագահի ընտրությունների բողոքարկման արդյունքները քննելիս առաջնորդվում էր ոչ թե Սահմանադրությամբ, այլ սովորույթի ուժով: Ավելին՝ 2003- ի ընտրությունների 2- րդ փուլի արդյունքներին նվիրված որոշման մեջ Գագիկ Հարությունյանի ղեկավարած դատարանն աննախադեպ քաղի դիմեց առաջարկեց «որպես նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմակայության հարթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը»: Ընտրությունը հենց վստահության հանրաքվե է, բայց երբ այդ հանրաքվե- ընտրության արդյունքներն ընդունելուց հետո ՄԴ- ն կոչ է անում նոր հանրաքվե անցկացնել, արդեն խոսում է պետական այս կատյոցի իրավագիտակցության մակարդակի մասին:

Հայաստանում ընտրական գործընթացները, որպես կանոն, ուղեկցվում են մարդու իրավունքների, եթե կարելի է ասել, զանգվածային խախտումներով, որոնք այդպես էլ մեր երկրում իրավական գնահատական երբեք չեն ստանում: Ու այսօր Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանի ղեկավարած հանձնաժողովը մեզ ներկայացնում է Սահմանադրության փոփոխությունների «մարդկայնություն» նախագիծ ու վստահեցնում, որ այս մեկն արդեն սովորույթի ուժով չի գործի:

Այսպես՝ 2003-ի նախագահական ընտրությունների ընթացքում Հայաստանի մոտ 130 քաղաքացի վարչական կարանքի ու պատժի ենթարկվեց «չարտոնագրված» հավաքների մասնակցելու համար: Եթե դատական մեկ որոշման մեջ լինել «արտոնագրված/իջե՛նգալիորված» բառը, կարող էինք ինչ- որ կերպ խոսել դատական վճռում առկա վրիպակի մասին, բայց երբ շատ վճիռներում է նման ձեռակերպում գտնվում, սա հայաստանյան իրավական մտքի համար պատրոշում է:

2004-ի ապրիլին, երբ ցուցարարներն իշխանություններից պահանջում էին կատարել ՄԴ որոշման «վստահության հանրաքվե» անցկացնելու առաջարկը, արդեն ռատիկանական հատուկ ուժերի եւ միջոցների օգտագործմամբ ցրվեց ընտրիչության բազմամարդ «չարտոնված» հանրահավաքը: Եվ սա այն դեպքում, երբ Սահմանադրությունն արձանագրում էր, որ «Քաղաքացիներն ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երջեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք»: 2004-ի ապրիլին չկար նաեւ որեւէ օրենք, որպեսզի հանրահավաքի արտոնում պարտադրեր, սակայն իշխանությունը կարող էր խախտել Սահմանադրությունը՝ սովորույթի ուժով, իսկ ՄԴ նախագահն էլ հիշեցնել, որ «վստահության հանրաքվեի» հիշատակումով իրենց որոշումը լոկ առաջարկ էր, որը կարող է եւ չկատարվել:

2008- ի մարտի 1-ին արդեն հանրահավաք ցրելու համար ոչ միայն հատուկ միջոցներ էին հարկավոր, այլև դիմահար կրակ Հայաստանի քաղաքացիների վրա: Եվ սհա, ՄԴ նախագահի ղեկավարած մասնագիտական հանձնաժողովը հետին թվով Սահմանադրական փոփոխություններով առաջարկում է, որ «...բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն անցկացվում են ողջամիտ ժամկետում կատարված իրազեկման հիման վրա» (ձեռակերպումն ավերացվեց ինքնաբերական ուժերի առաջարկությամբ), եւ որ մարդու ֆիզիկական եւ հոգեկան անձեռնմխելիության «իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության եւ բարոյականության կամ այլոց հիմնական

իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:

Ընդհանրապես՝ Սահմանադրությունը խախտելը եւ հետին թվով սահմանադրական փոփոխություններով այդ խախտումը օրինականացնելը եւս Հայաստանում սովորույթի ուժ ունի: Հիշո՛ւմ եք Բուզանդի փողոցի բնակիչների ունեզրկումը: Կառավարության որոշմամբ նրանց սեփական բնակարանը հանրային շահի անվան տակ էքսպրոպրեացիայի ենթարկվեց: Եվ սա այն դեպքում, երբ Սահմանադրությունը պարտադրում էր, որ «Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Եվ Հայաստանում չգտնվեց այն ժամանակվա իշխանավետ ոչ մի կուսակցություն, այդ թվում՝ իրեն ազգային համարող, ոչ մի դատարան, պետական ապարատում՝ այդ թվում դատախազությունում աշխատող ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ոչ մի շրջանավարտ, գիտնական- իրավաբան, որ պաշտպանի մեր երկրում մարդկանց սեփականության սահմանադրական իրավունքը: Դրա փոխարեն 2005- ի սահմանադրության մեջ արդեն ամրագրվեց, որ օտարումը կարող է լինել «միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ»: Սեփականության պահպանության նույն տրամաբանությունը պահպանվում է նաեւ նոր նախագծում:

Սահմանադրական իրավունքի՝ սովորույթի ուժով չգոյություն փաստերը կարելի է երկար շարունակել, ու այս պարագայում «մարդկայնություն» սահմանադրության մասին բնորոշումները լոկ գեղեցիկ խոսքեր են, որոնք այնքան սիրում է ՄԴ նախագահը, եւ ինչպես այս քննարկումներում ենք տեսնում, արդեն նաեւ մասնագիտական հանձնաժողովի անդամները:

Արմեն ՎԵՐԻՆՅԱՆ

## Հայաստանցիների 55,8 տոկոսը վստահ է, որ ընտրություններն ամբողջովին կեղծվում են, որ հարցում

Հայաստանցիների 55,8 տոկոսը վստահ է, որ ընտրություններն ամբողջովին կեղծվում են: Այս մասին, այսօր՝ նոյեմբերի 24-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել են «APR Group» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները, որոնք ներկայացրել են իրենց կազմակերպության անցկացրած հարցման արդյունքները:

Նշենք, որ հարցման անցկացվել է Երևանում եւ մարզերում 1300 բնակիչների շրջանում, որով փորձել են պարզել հասարակության վերաբերմունքը տնտեսական եւ սահմանադրությանը վերաբերող հարցերում:

Հարցման արդյունքներով, սահմանադրական գործընթացին տեղյակ է քաղաքացիների 80 տոկոսը, անտեղյակ՝ 20 տոկոսը: «Ըստ մեր հարցման՝ մարդկանց 64,4 տոկոսը կմասնակցի քվեարկությանը, 31,3-ր՝ ոչ, մնացածը՝ դեռ չեն կողմնորոշվել», -նշել է «APR Group» ՀԿ սոցիոլոգ Լիանա Բայրանը:

Հարցին, թե եթե հանրաքվեն առաջիկա կիրակի լինել, ինչպե՛ս կքվեարկելիք, հարցման մասնակիցների 35,8 տոկոսը նշել է, որ կողմ քվեարկի, 31,8 տոկոսը՝ դեմ, իսկ ավելի քան 12 տոկոսը նշել է, որ քվեաթերթիկն անվավեր կդարձնի:

Այրոսանդերձ, հարցման մասնակիցների 71,1 տոկոսը վստահ է, որ սահմանադրության փոփոխությունը կընդունվի:

«Հարցվածների 55,8 տոկոսը նշել է, որ ընտրություններն ամբողջովին կեղծվում են: Մի փոքր մասը վստահում է արդար ընտրությունների անցկացմանը, մյուսներն էլ՝ անտարբեր են», - ընդգծել է «APR Group» ՀԿ նախագահ Բուբեն Սարգսյանը:

## Հայաստան

### «ՀԺ». Մոսկվան բացում է փակագծերը Ղարաբաղի հարցի շուրջ



«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Երեկ «ՀԺ»-ն, հղում անելով իր աղբյուրներին, գրել էր, որ ԼՂ հակամարտության կարգավորման շուրջ անդրկուլիսյան նոր գործընթաց է ընթանում, որի հիմնական նախաձեռնողը Ռուսաստանի Դաշնությանն է: Ըստ իշխանական շրջանակներից ստացած տեղեկությունների, Ռուսաստանը փորձում է Հայաստանին համոզել Ադրբեջանին հանձնել մի քանի շրջան, որի շնորհիվ հույս ունի կկարողանա ստանալ Ադրբեջանի համաձայնությունը Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու հարցում:

Կարճ ասած, ՌԴ-ն Ադրբեջանին ԼՂ հարակից մի քանի շրջան է խոստանում, եթե Ադրբեջանը համաձայնի դառնալ ԵՏՄ անդամ: Եվ ահա երեկ, ռուսական ամենահեղինակավոր պարբերականներից մեկը «Կոմերսանտը», հղում անելով բանակցություններին մոտ կանգնած իր աղբյուրներին, գրել է, որ դարաբաղյան բանակցություններում այժմ քննարկվում է կարգավորման մի տարբերակ, որի համաձայն, հայկական կողմը պետք է վերադարձնի Ղարաբաղին հարակից տարածքների մեծ մասը բացառությամբ Լաչինի միջանցքի ու թերեւս եւս մեկ շրջանի, ինչի դիմաց Բաքուն թեւս պաշտոնապես չի ճանաչի Ստեփանակերտի անկախությունը, սակայն կպարտավորվի խնդիրը կարգավորել խաղաղ բանակցություններով: «Կոմերսանտի» նույն աղբյուրները պնդել են նաեւ, որ տարածաշրջանում կայունությունը երաշխավորելու համար տեղում կարող են ՄԱԿ-ի կամ ՀԱՊԿ-ի խաղաղապահներ տեղակայվել:

Իրականում, ըստ մեր հավաստի աղբյուրների, ՌԴ-ն համենայնդեպս հայկական կողմին հայտնել է իր զինված ուժերին տարածաշրջանում տեղակայելու մտադրության մասին, եւ ՄԱԿ-ի խաղաղապահների մասին խոսք չի եղել: Իսկ Մերժ Սարգսյանը, հիշեցնենք, անցյալ ամիս Նյու Յորքում ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի ժամանակ խոսում էր ՆԱՏՕ-ի խաղաղապահների մասին:

Մեր աղբյուրները հայտնում են, որ Նյու Յորքում ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի հետ հանդիպման ժամանակ Սարգսյանը քննարկել է հակամարտության գոտում խաղաղապահների տեղակայման հարցը: Պաշտոնական Վաշինգտոնը, բնականաբար, չի համակերպվի ռուս խաղաղապահների տեղակայման հետ:

Ըստ «Կոմերսանտի», Հայաստանն ու Ադրբեջանը ՌԴ-ի առաջարկած նման լուրջ փոխզիջումների գնալու

պատրաստակամություն չեն հայտնել: Բարվում շարունակել են պնդել, թե առավելագույնը, որ կարող են անել, Ղարաբաղի ինքնավարության ճանաչումն է Ադրբեջանի կազմում: Երեւանում եւս հրաժարվել են խոսել տարածքային ինչ-ինչ զիջումների մասին՝ ընդգծելով, որ նման ծրագիր չի էլ քննարկվում: Ավելին, ռուսական թերթի հետ գրույցում հայաստանյան աղբյուրը պնդել է, թե կարգավորման փորձերը դատապարտված են ճախողման, քանի դեռ բանակցություններին որպես ինքնուրույն դերակատար չի մասնակցում Լեռնային Ղարաբաղը: Բաքուն, բնականաբար, կտրականապես դեմ է ԼՂ-ին ներգրավելուն: Ռուսական պարբերականը նշում է, թե ադրբեջանական դիվանագիտական աղբյուրը պնդել է, որ փակուղային այս իրավիճակում խիստ մեծ է հավանականությունը, որ լարվածությունը ինչ-որ պահի կարող է վերածվել լայնածավալ հակամարտության»:

### Արայիկ Հարությունյանը հանդիպումներ է ունեցել ԱՄՆ Նևադա նահանգում



Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը նոյեմբերի 21-ին այցելել է ԱՄՆ Նևադա նահանգ և մի շարք հանդիպումներ ունեցել այնտեղ:


Վարչապետը ծաղիկներ է խոնարհել հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված՝ Նևադայում վերջերս բացված հուշարձանին՝ կարևորելով ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման նշանակությունը թե՛ հայ ազգի, և թե՛ համայն մարդկության համար: Արայիկ Հարությունյանն այնուհետև հանդիպել է այդ նահանգում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Անդի Արմենյանին և համայնքի մի շարք ներկայացուցիչների՝ նրանց հետ քննարկելով ազգապահպանությանը և Արցախ-սփյուռք հարաբերություններին վերաբերող որոշ հարցեր: Ա. Հարությունյանը հանդիպում է ունեցել նաև Նևադայի օրենսդիր մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների մի խումբ ներկայացուցիչների հետ: Վարչապետը նրանց ներկայացրել է Արցախի հաջողություններն ու խնդիրները պետականաշինության և տնտեսության զարգացման գործընթացներում, ինչպես նաև՝ դարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցող զարգացումները և ընդհանուր տարածաշրջանի իրավիճակը: Կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրության մի շարք հարցեր, ձեռք բերել հետագա համագործակցության վերաբերյալ պայմանավորվածություններ:

Համայնքի կողմից իր պատվին կազմակերպված ընդունելության ժամանակ վարչապետ Հարությունյանն ընդգծել է ազգային նշանակության հարցերում սփյուռքի ակտիվ մասնակցության կարևորությունը՝ կոչ անելով

ներկաներին մասնակցել առաջիկա հեռուստամարաթոնին՝ հանուն հայրենիքի շարունակական զարգացման: ԱՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

կտեղակայվեն նաև վերոհիշյալ կենտրոնն ու լաբորատորիան:

## Ամերիկյան քաղաքի պատվիրակությունն Արցախ է գնացել



The Office of the NKR President V.D.

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը նոյեմբերի 18-ին ընդունել է Կալիֆորնիայի Մոնտերեյո քաղաքի պատվիրակությանը՝ քաղաքապետ Ջեք Հաջինյանի գլխավորությամբ:

Քննարկվել են Ստեփանակերտ-Մոնտերեյո քույր-քաղաքների փոխգործակցությանը վերաբերող հարցեր: Նախագահ Սահակյանը կարելու է Արցախի մայրաքաղաքի եւ Մոնտերեյոյի միջև կապերի հետեւողական խորացումն ու ընդլայնումը՝ այն համարելով անկեղծ բարեկամության եւ փոխշահավետ համագործակցության ընդօրինակելի տարբերակ:

## Հայաստանում 2016-ին կսկսվի միջուկային բժշկության կենտրոնի կառուցումը

Հայաստանում 2016-ին կսկսվի միջուկային բժշկական կենտրոնի կառուցում: Այդ մասին նոյեմբերի 17-ին Հայաստանի խորհրդարանում 2016-ի պետքայնի նախագծի քննարկման ընթացքում ասել է առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը: 2016-ին շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 800 հազար դոլար: Բացի այդ, բուժման ուղեցույցներ կմշակվեն եւ բուժման որակի վերահսկողության կենտրոն կստեղծվի: Այդ նպատակի համար 95 հազար դոլար կհատկացվի:

## Երեւանի հեմատոլոգիական կենտրոնում ցողունային բջիջների լաբորատորիա կստեղծվի

Երեւանի Յոյանի անվան հեմատոլոգիական կենտրոնում ցողունային բջիջների եւ ոսկրածուծի փոխպատվաստման լաբորատորիա կստեղծվի: Այդ մասին նոյեմբերի 17-ին Հայաստանի խորհրդարանում հայտնել է առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը: Նախատեսվում է 2016-ին ավարտել կենտրոնի հիմնական մասնաշենքի վերանորոգումը եւ նորի կառուցումը ֆունկցիոնալ-ախտորոշիչ կենտրոնի համար: Այնտեղ



Երեւանի Յոյանի անվան հեմատոլոգիական կենտրոնում ցողունային բջիջների եւ ոսկրածուծի փոխպատվաստման լաբորատորիա կստեղծվի: Այդ մասին նոյեմբերի 17-ին Հայաստանի խորհրդարանում հայտնել է առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը: Նախատեսվում է 2016-ին ավարտել կենտրոնի հիմնական մասնաշենքի վերանորոգումը եւ նորի կառուցումը ֆունկցիոնալ-ախտորոշիչ կենտրոնի համար: Այնտեղ կտեղակայվեն նաև վերոհիշյալ կենտրոնն ու լաբորատորիան:

Ընդհանուր առմամբ այդ նպատակի համար արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերից կհատկացվի 4,7 մլն դոլար, հայտնել է նախարարը: Եվս 150 հազար դոլար կհատկացվի կենտրոնի մասնագետների վերաորակավորմանը, հավելել է նա:

## «Հրազդան» մարզադաշտում սինթետիկ ծածկույթով վազբուղիներ են կառուցվելու



«Հրազդան» մարզադաշտում սինթետիկ ծածկույթով վազբուղիներ են կառուցվելու:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է Եվրոպայի աթլետիկայի ասոցիացիայի նախագահ Սվեն Առնե Հանսենին եւ գործադիր տնօրեն Քրիստիան Միլցին: Վարչապետը կարելու է պարոնայք Հանսենի եւ Միլցի այցը Հայաստան եւ վստահություն հայտնել, որ այն կնպաստի մեր երկրում աթլետիկայի զարգացմանն ու Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի հետ համագործակցության խորացմանը: Հովիկ Աբրահամյանը նշել է, որ ՀՀ կառավարությունն անում է ամեն ինչ սպորտի եւ, ընդհանրապես, հանրության շրջանում առողջ ապրելակերպի զարգացման համար: Վարչապետը շնորհակալություն է հայտնել Եվրոպայի աթլետիկայի միջազգային ասոցիացիային՝ Երեւանի «Հրազդան»

մարզադաշտում սինթետիկ ծածկույթով վագրուդիների կառուցմանն աջակցելու համար:

Եվրոպայի աթլետիկայի ասոցիացիայի նախագահը եւ գործադիր տնօրենը նշել են, որ պատրաստ են հետագայում եւս աջակցել ՀՀ աթլետիկայի ֆեդերացիային՝ ՀՀ-ում մարզաձևի հետագա զարգացմանը նոր թափ հաղորդելու նպատակով: Նրանց խոսքով՝ Երեւանում սինթետիկ ծածկույթով վագրուդիների առկայությունը թույլ կտա առաջիկա տարիներին այստեղ կազմակերպել ու անցկացնել բազմաթիվ խոշորամասշտաբ միջազգային մրցումներ:

Այնուհետեւ վարչապետ Հովիկ Աբրահամյանի ներկայությամբ ստորագրվել է Երեւան քաղաքի «Հրազդան» մարզադաշտի վերանորոգման փոխմրցուման հուշագիր, որի շրջանակում էլ կիրականացվի «Հրազդան» մարզադաշտում սինթետիկ ծածկույթով վագրուդիների կառուցման ծրագիրը:

## Փոխվարչապետ. 1,5 տարում 1,5 մլրդ դոլար ենք ներգրավել, ամբողջը երկարաժամկետ զարգացման համար



Վերջին 1,5 տարում ՀՀ կառավարությունը 1,5 մլրդ դոլար է ներգրավել՝ երկրի երկարաժամկետ զարգացման համար: Այս մասին, այսօր՝ նոյեմբերի 17-ին, ԱԺ-ում հայտարարել է ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Նա ընդգծել է, որ խոսքը պայմանավորվածությունների մասին է, եւ դեռ ոչ բոլոր գումարներն են ստացվել: Այդուհանդերձ, տնտեսությունն արդեն յուրացրել է դրանցից 146 մլն դոլարը: Այդ միջոցներն ուղղվում են երկարաժամկետ, ոչ թե ընթացիկ բազրերի իրականացմանը:

«Ընթացիկ ծախսերի համար մենք միջոցներ ունենք, այս պահին Կառավարության կայունացման հաշվին կա 75 մլրդ դրամ», -ասել է նախարարը:

Նշված 146 մլն դոլարից՝ դրամով 70 մլրդ դրամից 59 մլրդ-ը ուղղվել է ծրագրերի ֆինանսավորմանը, 11 մլրդ-ը՝ բյուջետային աջակցությանը:

«Կոնկրետ ինչի՞ վրա են ծախսվել: Ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի, ոռոգման համակարգերի: Դա տնտեսությունը խթանելու լավագույն միջոցն է: Այդ միջոցների ներգրավումը խոսում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանի հանդեպ բարձր վստահության մասին», - ընդգծել է փոխվարչապետը:

## Մյուս տղերքից շատ էր առանձնանում, լավ հետախույզ էր. Սողոմոն Քոչարյանին հողին հանձնեցին «Եռաբլուրում»



20 տարվա ազատազրկումից հետո դատարանի որոշմամբ պատժի հետագա կրումից ազատված եւ 15 օր անց հիվանդանոցում մահացած ցմահ դատապարտյալ Սողոմոն Քոչարյանին այսօր՝ նոյեմբերի 11-ին հողին հանձնեցին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Հուղարկավորությանը ներկա էին Սողոմոն Քոչարյանի հարազատները, մարտական ընկերներն ու անձանոթ քաղաքացիներ:

«Սողոմոնն աստվածային հետախույզ էր, նրան բավական էր առաջադրանք տալ, մնացածն ինքն էր անում էր ինչպես որ պետք է: Ինքը ջոկատի մյուս տղերքից շատ էր առանձնանում: Այրում էր պատերազմով, իր հայրենափրությամբ: Սողոմոնը մեր իրականության առանցքն է, շատ լավ կարելի է նրա միջոցով հասկանալ, թե մենք ինչպես ենք գնահատում մեր հերոսներին», - Աղբյուր-ի հետ զրույցում ասաց «Շուլուխ» ջոկատի կազմակերպիչներից Վիրաբ Եղիազարյանը, որի ջոկատում կռվել է Սողոմոն Քոչարյանը:

Սողոմոն Քոչարյանին հողին հանձնեցին զինվորական հագուստով:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2015թ. հոկտեմբերի 22-ին, իրանահայատակ աղբբեջանցու սպանության համար ցմահ ազատազրկման դատապարտված ազատամարտիկ Սողոմոն Քոչարյանին հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատելու որոշում է կայացրել:

Հիշեցնենք, որ Սողոմոն Քոչարյանը ազատազրկվել էր 20 տարի առաջ: Պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ Սողոմոն Քոչարյանը տառապում էր սրտի իշեմիկ հիվանդությամբ՝ 4-րդ աստիճանի սրտային անբավարությանը (իշեմիկ կարդիոմիոպաթիա), ունի հետինֆարկտային խրոնիկ անեւրիզմա, հիվանդ էր նաեւ կանգային թոքաբորբով: Այս հիվանդությամբ նա ենթակա էր պատժից ազատման՝ համաձայն Կառավարության 825-Ն որոշմամբ հաստատված պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկի:

Սողոմոն Քոչարյանը մահապատժի է դատապարտվել 1995թ.՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի աղբբեջանցուն Հայաստանում սպանելու համար, սակայն հետո պատիժը փոխարինվել էր ցմահ ազատազրկմամբ:



Սողոմոն Քոչարյանը 2-րդ կարգի հաշմանդամ է, ՀՀ սահմանների պաշտպանության եւ ԼՂՀ ազատագրական պայքարի ակտիվ մասնակից: Նրա ազատագրկումից մի քանի տարի անց ծանր հիվանդությունից մահացել է կինը, մեկ տարի առաջ 18 տարեկանում ինքնասպանություն է գործել նրա միակ դուստրը:

## Մինչեւ վերջ էլ սիրահարված էր հայրենիքին. Սողոմոն Քոչարյանի մարտական ընկեր



20 տարվա ազատագրկումից հետո դատարանի որոշմամբ պատժի հետագա կրումից ազատված եւ 15 օր անց հիվանդանոցում մահացած ցմահ դատապարտյալ Սողոմոն Քոչարյանին մարտական ընկերներն հիշում են որպես հայրենասեր, քաջ ու խելացի զինվորի: Աղբյուր-ի հետ զրույցում Սողոմոն Քոչարյանի մարտական ընկեր Սարգիս Թադևոսյանը հպարտությամբ պատմեց արցախյան պատերազմի տարիներին հետախույզ ընկերոջ կատարած սիրագործությունների մասին: Սարգիս Թադևոսյանի խոսքով, Սողոմոն Քոչարյանի կազմակերպչական եւ պրոֆեսիոնալ հմտությունների շնորհիվ, պատերազմի տարիներին բազմաթիվ անգամ կարողացել են ընդամենը մի քանի հետախույզներով ոչնչացնել հակառակորդի կողմից ուղարկված 10-ից ավելի հետախույզների:

«Սողոմոնը քաջ մարտիկ էր, մինչեւ վերջ էլ սիրահարված էր հայրենիքին, նրան ոչինչ չէր կոտրել, երագում էր, որ շուտ ապաքինվի, ոտքի կանգնի, որ գնա հայրենիքին ծառայելու: Շատ հարցերում կարելի է նրանից օրինակ վերցնել: Ինչ էլ որ արել էր, որի համար նրան դատապարտել էին,

հայրենիքի համար, Հայաստանի համար էր արել»,-ասաց Սարգիս Թադևոսյանը:

Սարգիս Թադևոսյանի խոսքով, Սողոմոն Քոչարյանին ամենից շատ թեւաթափ էր արել աղջկա ինքնասպանություն կատարելու լուրը, որին անազատության մեջ կարողացել էր ընդամենը 4 անգամ տեսնել:

Հետախույզի մարտական ընկերներից Ստեփանն էլ մեզ հետ զրույցում նշեց, որ վերջին օրերին խուսափել է այցելել Սողոմոն Քոչարյանին, քանի որ իր համար դժվար ու անսովոր է եղել նրան տեսնել անօգնական վիճակում:

Հիշեցնենք, որ Սողոմոն Քոչարյանը մահացավ Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում, որտեղ տեղափոխվել էր ամիսներ առաջ: Նրա հուղարկվածությունը տեղի կունենա նոյեմբերի 11-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Ավելի վաղ տեղեկացրել էինք, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2015թ. հոկտեմբերի 22-ին, իրանահպատակ աղբրեջանցու սպանության համար ցմահ ազատագրկման դատապարտված ազատամարտիկ Սողոմոն Քոչարյանին հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատելու որոշում է կայացրել:

Հիշեցնենք, որ Սողոմոն Քոչարյանը ազատագրկվել էր 20 տարի առաջ: Պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ Սողոմոն Քոչարյանը տառապում էր սրտի իշեմիկ հիվանդությամբ՝ 4-րդ աստիճանի սրտային անբավարարությամբ (իշեմիկ կարդիոմիոպաթիա), ունի հետինֆարկտային խրոնիկ անևրիզմա, հիվանդ էր նաեւ կանգային թոքաբորբով: Այս հիվանդությամբ նա ենթակա էր պատժից ազատման՝ համաձայն Կառավարության 825-Ն որոշմամբ հաստատված պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդությունների ցանկի:

Սողոմոն Քոչարյանը մահապատժի է դատապարտվել 1995թ.՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի աղբրեջանցուն Հայաստանում սպանելու համար, սակայն հետո պատիժը փոխարինվել էր ցմահ ազատագրկմամբ: Սողոմոն Քոչարյանը 2-րդ կարգի հաշմանդամ է, ՀՀ սահմանների պաշտպանության եւ ԼՂՀ ազատագրական պայքարի ակտիվ մասնակից: Նրա ազատագրկումից մի քանի տարի անց ծանր հիվանդությունից մահացել է կինը, մեկ տարի առաջ 18 տարեկանում ինքնասպանություն է գործել նրա միակ դուստրը:

## Ղարաբաղի հարցում տարածքային ամբողջականության եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքները հակասում են իրար. նախկին միջնորդ



Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նախկին միջնորդ, շվեդ դիվանագետ Յան Էլիասոնը կարծում է, որ

հակամարտության կարգավորման մոդել կարող է դառնալ «ինքնավարություն պլան» կամ «անկախություն միուս» բանաձևեր:

«Ռուսներ» գործակալությանը տված հարցազրույցում Յան Էլիասոնը, որը 1993-1994թթ. ղեկավարում էր Մինսկի խումբը, իսկ ներկայումս ՄԱԿ Գլխավոր քարտուղարի տեղակալն է, ասել է, որ Լեռնային Ղարաբաղի հարցում միջազգային իրավական սկզբունքները (տարածքային ամբողջականությունն էլ ինքնորոշման իրավունք) հակասում են իրար:

«Ես նույնպես տարածքային ամբողջականության կողմնակից եմ, բայց դուք պետք է այնպիսի կարգավիճակ առաջարկեք, որն ընդունելի է բոլորի համար... Լեռնային Ղարաբաղի ապագայի համար ընդհանուր տեսլական պետք է լինի: Երբ այդ տեսլականը (կարգավիճակ) գտնեք, ամեն բան իր տեղը կընկնի»,- նշել է նա՝ ընդգծելով, որ Բաքվի եւ Երեւանի միջև անկեղծ քննարկումների անհրաժեշտություն կա:

«Քաղաքական առաջնորդները պետք է հասկանան, որ իրավիճակն ավելի վտանգավոր է դառնում, եւ տարիների հետ այն ավելի ու ավելի վատ է դառնալու»,- նշել է նա:

Անդրադառնալով 1990-ական թթ. սկզբին հակամարտության միջնորդ լինելու իր աշխատանքին՝ Էլիասոնն ասել է, որ այդ տարիներին Ղարաբաղի ինքնավարության շուրջ բաց քննարկումներ էին ընթանում կողմերի լիակատար համագործակցության պայմաններում, չնայած ինքնավարության տեսլականը կողմերի համար էապես տարբերվում էր:

«Ներկայումս ես այնքան էլ հպարտ չեմ այն ժամանակ ձեռք բերած հրադադարի համաձայնագրով, քանի որ հիմնական խնդիրը մնում է չլուծված: Չկա խաղաղություն առանց զարգացման եւ չկա զարգացում առանց խաղաղության»,- փոխտնօրեն եզրափակել է Յան Էլիասոնը:

Պուտինը կարգադրել է Հայաստանի հետ ՀՕՊ միավորված համակարգ ստեղծելու համաձայնագիր ստորագրել:

## Լեւոն Մուրաֆյանի դին հայտնաբերվել է լոգասենյակում. մարմնի վրա բռնության հետքեր չեն եղել. ՔԿ

Երեւանյան հյուրանոցներից մեկում այսօր՝ նոյեմբերի 11-ին, մահացած հայտնաբերված թատերագետ Լեւոն Մուրաֆյանի մարմնի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Այս մասին Ադրբայջանի հայտնեցին Քննչական կոմիտեի մամուլի ծառայությունից: ՔԿ-ի փոխանցմամբ՝ կատարվում է քննություն՝ պարզելու Լեւոն Մուրաֆյանի մահվան հանգամանքները:



«Ահազանգից անմիջապես հետո դեպքի վայր է մեկնել ըննչական-օպերատիվ խումբը՝ քննիչի գլխավորությամբ եւ

հյուրանոցի համարներից մեկի լոգասենյակում հայտնաբերվել է Լեւոն Մուրաֆյանի դին: Դատաբժշկի կողմից դիակի նախնական զննության արդյունքում բռնության հետքեր չեն հայտնաբերվել: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն»,- ասացին ՔԿ-ից՝ նշելով, որ ձեռնարկվում են անհրաժեշտ գործողություններ՝ Մուրաֆյանի մահվան հանգամանքները պարզելու համար: Ավելի վաղ Ադրբայջանը հայտնել էր, որ 2015թ. նոյեմբերի 11-ին, Երեւանի Չաքյան փողոցում՝ «Աստորիա» հյուրանոցի սենյակներից մեկում, հայտնաբերվել է թատերագետ Լեւոն Մուրաֆյանի դին:

## Տարածաշրջան: Հայաստան, Ռուսաստան Թեմա: Քաղաքականություն



ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կարգադրել է Հայաստանի հետ համաձայնագիր ստորագրել հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում ՀՕՊ միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին: «Ընդունել Ռուսաստանի Դաշնության կառավարության առաջարկը՝ Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության միջև հավաքական անվտանգության Կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին»,- ասված է փաստաթղթում, որը հրապարակված է իրավական տեղեկատվության կայքում, փոխանցում է «Վզգյադ»-ը:

ՌԴ Պաշտպանության նախարարության հանձնարարությամբ ԱԳՆ-ի մասնակցությամբ բանակցություններ վարել հայկական կողմի հետ ու Ռուսաստանի անունից համաձայնագիր ստորագրել:

Այս տարվա ապրիլին հայտնի էր դարձել Արեւելյան Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում եւ Կովկասում ԱՊՀ շրջանակներում ՀՕՊ միասնական համակարգեր ստեղծելու պլանների մասին:

ԱՊՀ անդամ երկրների ՀՕՊ միավորված համակարգը գործում է արդեն ավելի քան 20 տարի: Համակարգի խնդիրը անդամ երկրների օդային սահմանների անվտանգության ապահովումն է եւ հնարավոր օդատիեզերական հարձակման համատեղ հետմղումը:



## «Իսլամական պետության» սպառնալիքներից հետո ՀՀ Քաղաքացիան չի խստացրել անվտանգության միջոցառումները



«Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման սպառնալիքներից հետո Հայաստանի քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը չի խստացրել արտերկիր մեկնող օդանավերի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները: Աղբյուրի թղթակցի հետ գրույցում գլխավոր վարչության մամուլի խոսնակ Ռուբեն Գրոզեյանը նշեց, որ իրենք շարունակում են թռիչքներն իրականացնել բնականոն հունով:

Հիշեցնենք, որ մեկ ամիս առաջ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը ձայնագրություն էր տարածել, որում Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի դեմ ջիհադի՝ սրբազան պատերազմի կոչ է արվում: Առաջնորդներում ԻՊ-ի դեմ պայքար մղող ռուսական եւ ամերիկյան ուժերին «խաչակիրներ» են կոչել:

## Արեւմտյան Հայաստան

### Դինքի սպանության պահին ժանդարմերիան ներկա է եղել ու հետեւել հանցանքին Ի դատախազություն



Հրանտ Դինքի սպանության պահին տարածքում ներկա են եղել Տրասպիզոնի ժանդարմերիայի հետախուզության գործակալները, ովքեր համագործակցել են սպանությունն իրականացրած Օգյուն Սամասթի հետ: Նման տողեր են գրված Դինքի սպանության գործով մեղադրական գեկույցը գործը քննող դատախազին հետ տված գլխավոր դատախազության հայտարարության մեջ:

Ինչպես տեղեկացնում է թուրքական BirGun պարբերականը, Հրանտ Դինքի սպանության գործով մեղադրական գեկույցը երկրորդ անգամ գործը քննող

դատախազ Գյոքալի Բյոքչուին վերադարձնելը լուրջ խմորումներ է առաջացրել դատական համակարգում: Գլխավոր դատախազությունը մեղադրական գեկույցը հետ վերադառնելը պատճառաբանել է այն հանգամանքով, որ տեսագրությունների մեջ Դինքի սպանության պահին տարածքում են եղել կասկածելի դեմքեր, ովքեր, ինչպես ավելի ուշ պարզվել է, հանդիսացել են Տրասպիզոնի եւ Ստամբուլի ժանդարմերիայի հետախուզության գործակալները: Հիշյալ գործակալները համագործակցել ու հետեւել են Օգյուն Սամասթին՝ Հրանտ Դինքին սպանելու համար:

Դինքի ընտանիքի փաստաբաններից Հաքան Բաքրըջըռոլուն նշել է, թե գլխավոր դատախազությունը հետ է վերադարձնում մեղադրական գեկույցը՝ ստիպելով երեք կարեւոր պաշտոնյաների վրայից հանել մեղադրանքները: Նա շեշտել է, թե ներկայում Դինքի գործը քննող դատախազ Գյոքալի Բյոքչուն գործը լավ է քննում եւ անհրաժեշտ է, որ նա էլ ավարտին հասցնի գործը: Փաստաբանը պնդել է, թե հիշյալ դատախազի դեմ գլխավոր դատախազությունը բողոքել է Դատավորների եւ դատախազների բարձրագույն խորհրդին:

### Ինչո՞ւ Գյուլենը Էրդողանին նգովելու ընթացքում հիշեց Հայոց Բագրատունիներին. մեկնաբանում է թուրքագետը

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի դիտարկում թշնամի Ֆեթհուլլահ Գյուլենը Էրդողանին նգովելու ընթացքում նաեւ անիծում է «Բագրատունի ահաբեկչական» խմբավորմանը: Բագրատունի անունը Թուրքիայում մեծ արձագանք է գտել: Այս հարցի շուրջ Աղբյուր-ին մեկնաբանություն է տվել թուրքագետ Անդրանիկ Իսպիրյանը:

Ֆեթհուլլահ Գյուլենը նգովելով արձագանքեց օրեր առաջ Էրդողանի հրահանգով Ֆեթհուլլահ Գյուլենին եւ նրա շարժման հետեւորդներին ահաբեկիչ հայտարարելուն: Գյուլենին իր նգովելում ասաց. Թող Աստված պատժի ոչ ահաբեկչական կառույցին ահաբեկչական աստղին, թող Աստված պատժի Բագրատունի ահաբեկչական կառույցին...»:

Թուրքիայում ուշադրություն չդարձրեցին, որ նգովել է հնչում Էրդողանին, սակայն մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին «Բագրատունի կառույցի» հանդեպ: Թուրքիայում բոլորը սկսեցին մտնել ինտերնետ՝ ճշտելու, թե ովքեր են Բագրատունիները:

Սակայն Հայոց Բագրատունիների թեման միստիկ ու առեղծվածային երանգներ է ձեռք բերել Թուրքիայում: Թուրք վերլուծաբանները համարում են, որ Բագրատունիները 3 ինքնություն ունեցող զաղտնի խմբավորում են, ովքեր ճանաչում են միմյանց ու ապրում հատուկ կանոններով: Այսինքն, Թուրքիայի Բագրատունիների արտաքուստ մուսուլման են, սակայն ծպտյալ հայ են, իսկ 3-րդ շերտում հրեա են:

Հրեական արմատներով թուրք հետազոտող Գադ Նասսին, ով ուսումնասիրություններ է կատարում զաղտնի խմբակների ուղղությամբ, առանձնահատուկ ուշադրության է հրավիրել Թուրքիայում հայ Բագրատունիների կենցաղի ու սովորույթների վրա: Ըստ Նասսիի՝ Բագրատունիները Թուրքիայում ապրում են հիմնականում Սրվաից Երզնկա ընկած հատվածում, Արաբկիրում, Կապադոկիայում եւ Կիլիկիայում: Նա նշում է, թե Բագրատունիները ամեւտրի եւ ֆինանսական ոլորտում մեծ հաջողություններ են վայելում:

Բագրատունիների հետ կապված պնդումներով է հայտնի նաև ստամբուլի հակահայ լրագրող Լևոն Փանոս Դաբադյանը, ով շեշտում է, թե Չեյթունի ապստամբության հետևում կանգնած են եղել Բագրատունիները, ովքեր կազմակերպել են այն:

Իսկ որոշ թուրք լրագրողներ շեշտում են, Թուրքիայում Բագրատունիները ազդեցիկ պաշտոններ են զբաղեցնում ու կարևոր դերակատարներ են Թուրքիայի կյանքում:

Իսկ Գյուլենի նգովքում Բագրատունիներին հիշատակելու հետ կապված թուրք ուսումնասիրողների ամենահետաքրքիր մեկնաբանությունն այն է, որ Գյուլենը իր նգովքի տեքստով գաղտնի ուղերձ է հղել համապատասխան մարդկանց:

Նշենք, որ հայ Բագրատունիները նախարարական, ապա արքայական տոհմ էին Հայաստանում (IX–XI դարերում): 922 թ-ից կրել են Շահնշահ Հայոց և Վրաց տիտղոսը: Վրաստանում սկզբնավորել են վրաց Բագրատունիների արքայատոհմը (IX–XIX դարեր):

## Մեր ինքնությանը տեր կանգնելու համար պետք է զգենք ինքնավարության հիմքերը. Թուրքիայի համշենահայեր



Թուրքիայի համշենահայ կանաչք հրապարակավ իրենց աջակցությունն են արտահայտել քրդերի կողմից հայտարարված ինքնավարությանը: Այդ մասին հաղորդում է Akunq.net-ը՝ վկայակոչելով 'Bestanuce1.com' լրատվակայքը:

Աղբյուրի համաձայն՝ Ստամբուլում գործող համշենահայկական ՀԱՏԻԿ միության անդամ Էլիֆ Ալթունքայան իրենց հետ զրույցում նշել է, որ Սուրում, Ջիզրեում, Միլվանում, Վարթոյում և այլ քաղաքներում հռչակված ինքնավարության կարիքն ամենաշատը զգում են սև ծովյան ժողովուրդները և ասել. «Ծովի գավակներն ու լեռան գավակները, ձեռք ձեռքի տված պայքարելով, պետք է տեր կանգնեն ինքնավարությանը»:

Թուրքիայի Արեւելասեւծովյան շրջանում փորձում են ոչնչացնել համշենահայերի լեզուն, մշակույթը, գետերն ու յայլաները: Էլիֆ Ալթունքայան ընդգծել է, որ այդ պատճառով ինքնավարությունը հարմար դեկավարման ձև կլինի առավելապես իրենց բնությանն ու լեզվին տեր կանգնած սև ծովյան ժողովուրդներին:

Էլիֆը նաև հայտնելով, որ իր մայրենի լեզուն ու մշակույթն սկսել է հայտնագործել համալսարանական տարիներին, շեշտել է նաև, թե ինքն ազդվել է քուրդ ժողովրդի՝ ազատության համար մղած պայքարից:

Համշենահայ կինը նաև ասել է. «Քրդախոս ընկերներս պայքարում էին իրենց մայրենի լեզվի համար: Մեր տանն էլ

էին մեկ այլ լեզվով խոսում: Մենք նախ այդ լեզուն ենք սովորել. ինչու՞ այն կրթության լեզու չլինի մեզ համար»:

Էլիֆը նշելով, որ այնուհետև Ստամբուլում բացվել է ՀԱՏԻԿ համշենահայկական միությունը (այն բացվել է 2011 թ.- Կլուբի խմբ.), հայտնել է. «Քրդերը ցույց տվեցին ինքնակազմակերպման նշանակությունը»:

Նաև շեշտելով, որ 1915 թ. Հայոց ցեղասպանության սահմանափակ քաղաքականության հետևանքները զգալի են եղել նաև համշենահայ քաղաքացիների վրա, նա նշել է. «Համշենահայերենը հայերենի բարբառներից մեկն է, և հայերը ենթարկվել են կոտորածի: Արդեն իսկ երկար տարիներ այդ ուղղությամբ որևէ պայքար չի եղել: Սակայն քրդերի պահանջներն ու պայքարը բոլոր ժողովուրդներին ցույց տվեցին, թե որքան կարևոր է ինքնակազմակերպումը: Ներկայում սև ծովյան շրջանը թալանվում է՝ առանց հաշվի առնվելու այնտեղի ժողովուրդներին: ՀԷԿ-երի նախագծերը, թեյի վրա դրված քվոտաները ցույց են տալիս տվյալ շրջանի ամեն մի բնակչի կենսապայմանների բարդացումը: Այսինքն՝ ինքնավարության կարիքն ամենաշատը մենք ունենք: Համշենցի քաղաքացիների լեզվի, մշակույթի և բնության պահպանման միակ ուղին ինքնավարությունն է: Քուրդիստանում հռչակված ինքնավարությունը պետք է օրինակ ծառայի համշենցի քաղաքացիների համար: Թուրքիայում օտար համարված ժողովուրդներն այլընտրանք չունեն՝ ինքնակազմակերպումից բացի: Մեր բնությանը և ինքնությանը տեր կանգնելու համար մենք ևս պետք է զգենք ինքնավարության հիմքերը»:

## Վանի հայկական Սուրբ Բարդուղեմեոս եկեղեցին թուրք զինվորականները որպես զուգարան են օգտագործել



Թուրքիայի տարածքում գտնվող եւ մինչ վերջերս զորամասի տարածքում գտնվող հայկական Սուրբ Բարդուղեմեոս եկեղեցին երկար տարիներ թուրք զինվորների կողմից որպես զուգարան է օգտագործվել: Այս մասին գրել է քրդական DIHA գործակալության թղթակիցը: Քուրդ թղթակիցն այցելել է Վանի Ալբայրաքի շրջանում գտնվող հայկական պատմական Սուրբ Բարդուղեմեոս եկեղեցի եւ պատասխանատուներից հետաքրքրվել պատմական արժեքի ճակատագրով:

Թղթակիցը պարզել է, որ Հայոց ցեղասպանությունից հետո հայկական եկեղեցին հայտնվել է զորամասի տարածքում, որտեղ զինվորներն ավերել են այն, ջնջել սրբապատկերներն ու գրությունները եւ որպես զուգարան օգտագործել այն:

Ալբայրաքի բնակիչներից Ֆաիք Դուրմազը նշել է, թե իրենք բազմաթիվ անգամ դիմել են պատասխանատուներին՝ եկեղեցին վերանորոգելու համար, սակայն որեւէ արձագանք դեռ չկա: DIHA-ի թղթակիցը կապվել է նաև Վանի մշակույթի եւ տուրիզմի վարչության պատասխանատուի հետ, ով շեշտել է, թե եկեղեցու

վերանորոգման հետ կապված նախաձեռնություն եղել է, սակայն գումարի անբարարության պատշառով այն կիսատ է մնացել: Ավելի վաղ Աղբյուր-ի թղթակցին հաջողվել էր մտնել եկեղեցու տարածք եւ ֆիքսել եկեղեցու գեղեկությունը (Փոտոռեպորտաժ):

Նշենք, որ Ըստ ավանդության եկեղեցին հիմնադրել է հայոց Սանատրուկ թագավորը Սուրբ Բարդուղեմեոս առաքյալի գերեզմանի վրա: Միջնադարում այն եղել է Աղբակ գավառի առաջնորդանիստ վանքը եւ կարելու ուխտատեղի: Եկեղեցուն արեւմուտքից կից գավթի շքամուտքին քանդակված են գահին բազմած Հայր Աստված, Քրիստոս և աղավանակերպ Սուրբ Հոգին: Սուրբ Երրորդության այս պատկերաքանդակը տվյալ թեմայով լավագույն ստեղծագործություններից է: Ներկայում այս պատկերաքանդակը կիսով չսփռված է:

**Բոլորդ հայ եք, դուք կտեսնեք ձեր օրը. սպառնացել են թուրք զինվորներն ու այրել քուրդ զինյալների դիակները**

Թուրքիայի Վան նահանգի Արճեշի շրջանի Թոնդրակ գյուղում զինվորականները սպանված քուրդ զինյալներին այրել են, որից հետո նրանց մոխրացած դիակների վրա շուրջպար բռնել: Քրդական DIHA գործակալության փոխանցմամբ՝ նոյեմբերի 15-ին Արճեշի Թոնդրակ գյուղում թուրք զինվորների ու քուրդ զինյալների միջև բախման վերաբերյալ սարսափելի տեղեկություններ են հայտնել տեղացիները: Թոնդրակցիները պատմել են, որ թուրք զինվորները գործողություն են իրականացրել մի տան դեմ, որտեղ եղել են 3 քուրդ զինյալ: Չինվորականները չեն բավարարվել տունը ռմբակոծելով ու ցանց սարքելով, այլ 3 քուրդ զինյալներին սպանելուց հետո այրել են նրանց դիակները: Ականատեսները պնդել են, որ զինվորականները իրենց հաջողությունը նշել են սպանված քուրդ զինյալների վրա շուրջպար բռնելով: Ականատեսները պատմել են նաև, որ թուրք զինվորականները դիակները այրելու ժամանակ սպառնացել են քուրդ գյուղացիներին՝ ասելով. «Բոլորդ հայ եք, դուք դեռ ձեր օրը կտեսնեք»:

**Թուրքիայի Սվազում գտնվող հայկական րված գերեզմանատունը մաքրվել է աղբից**



Թուրքիայի Միվաս (Սվազ-խմբ) քաղաքում գորամասի հարեւանությանը գտնվող եւ աղբանոցի վերածված հայկական գերեզմանատունը մաքրվել է աղբից: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Միվասի քաղաքապետարանը «Հասարակության օգտին

արվող աշխատանքներ» ծրագրի շրջանակում կազմակերպել է աղբանոցի վերածված հայկական գերեզմանատան մաքրումն ու խնամքը: Կատարված աշխատանքների հետ կապված քաղաքապետարանի պատասխանատուներից մեկը հայտարարել է, թե իրենք կատարել են իրենց 800-ամյա հարեւանների հանդեպ պարտականությունը: «Մեր պետության ու իշխանությունների հոգածությունը մեր հանգուցյալ հայ հարեւանների նկատմամբ միշտ էլ լինելու է»,-ասել է նա:

**Միյունք**

**Վախճանվել է պոլսահայ ականավոր բանաստեղծ Չարեհ Խրախունին**



Ստամբուլում, նոյեմբերի 27-ին, վախճանվել է պոլսահայ ականավոր բանաստեղծ, ՀՀ բարձրագույն ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑ շքանշանակիր Չարեհ Խրախունին (Արթուր Ծյումայուշյանը): Այս մասին հայտնել է Ստամբուլի «Մարմարա» օրաթերթի գլխավոր խմբագիր Ռուպեր Հատտենյանը:

**Թուրքիայում 3 հայ թեկնածուները պատգամավոր են դարձել**

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 26-րդ գումարման ընտրությունների արդյունքում երեք կուսակցություններից ներկայացված հայ թեկնածուները կրկին պատգամավոր են դարձել: Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում «Ժողովրդահանրապետական» կուսակցության ընտրացուցակում առաջին հորիզոնականը զբաղեցնող հայազգի Մելինա Դողանը պատգամավոր է վերընտրվել:

Ստամբուլի 2-րդ ընտրատարածքում «Արդարություն եւ զարգացում» կուսակցության ընտրացուցակում 14-րդ հորիզոնականում գտնվող Մարգար Եսայանը նույնպես ընտրվել է: Ստամբուլի 3-րդ ընտրատարածքում քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցության ընտրացուցակում 2-րդ տեղը զբաղեցնող Գարո (Կարապետ) Փայլանը կրկին պատգամավոր է դարձել:

Ավելի վաղ Աղբյուր-ը հայտնել էր, որ Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ ընդհանուր քվեատուփերի 80 տոկոսը հաշվել են, եւ ստացվել է հետևյալ պատկերը •

«Արդարություն եւ զարգացում» կուսակցություն-49,3 տոկոս, «Ժողովրդա-հանրապետական» կուսակցություն-25,4 տոկոս, «Ազգայնական շարժում» կուսակցություն-11,9 տոկոս, «Ժողովուրդների դեմոկրատական» կուսակցություն-10,9 տոկոս: Նշենք, որ ընդդիմությունը առարկություններ է հայտնել բացված քվեատուփերի արդյունքների հետ կապված՝ շեշտելով, թե ավելի քիչ քվեատուփեր են բացվել, քան ներկայացրել ԿԸՀ-ն:

## ԱՄՆ-ում փոստային բաժանմունքը անվանակոչվել է Ջորջ ժուսկայանի անունով



ԱՄՆ Ներկայացուցիչների պալատն այս շաբաթ միաձայն հավանություն է տվել Համար 6392 բանաձեւին, ըստ Սենտրվիլի (Վիրջինիա) «Ուեստֆիլդս բուլվարում» գտնվող փոստային բաժանմունքը անվանակոչվել է գնդապետ Ջորջ ժուսկայանի անունով:

ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանատունը հայտնում է, որ բանաձեւը ներկայացրել է կոնգրեսական Ֆրենկ Վուլֆը, այն պաշտպանել են վիրջինիացի բոլոր կոնգրեսականները: Փոստային բաժանմունքը անվանակոչվել է Ջորջ ժուսկայանի անունով նրա մատուցած զինվորական ծառայությունների եւ հասարակությանը մատուցած ծառայությունների պատիվ:

ԱՄՆ ժուսկայանը վախճանվել էր 2010-ի հուլիսի 4-ին եւ արժանավայել կերպով թաղվել Առլինգտոնի ազգային գերեզմանատանը: Նա բարձրագույն պարգևների արժանացած ամերիկահայ վետերան էր, որ 30 տարի ծառայել էր ամերիկյան բանակում, չմոռանալով նաև իր լուծման ներդրել հայկական համայնքի կարիքներին:

## Շառլ Ազնավուրն արժանացել է Բելգիայի բարձրագույն պարգևի



Բելգիայի արտգործնախարար Դիյեյ Ռեյնդերսը Շառլ Ազնավուրին պարգևատրել է Թագավորության բարձրա-

գույն պարգևներից մեկով՝ Թագի շքանշանով, հայտնում է բելգիական Telebruxelles կայքը:

Բելգիայի արտգործնախարար Դիյեյ Ռեյնդերսը Շառլ Ազնավուրին պարգևատրել է Թագավորության բարձրագույն պարգևներից մեկով՝ Թագի շքանշանով, հայտնում է բելգիական Telebruxelles կայքը:

Շահնուր Վաղինակ Ազնավուրյանը Բելգիայի՝ նշանակությամբ երկրորդ այդ շքանշանը ստացել է Բրյուսելում կայանալիք իր համերգի նախօրեին:

2004թ. 80-ամյա Ազնավուրին արդեն հանձնել էին բելգիական մեկ այլ շքանշան՝ Լեոպոլդ արքայի շքանշանը: Մրցանակը նրան շնորհվել էր բարձր մակարդակով բացատրիկ երկարամյա ստեղծագործական գործունեության, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի դեսպանի գործունեության եւ ֆրանսիական լեզվի տարածման գործում ունեցած ավանդի համար:

## Լույս Ուզունյանի հայրը բոլկոտել է ահաբեկչության զոհերի հիշատակի միջոցառումը. Նա բաց նամակ է հրապարակել



Փարիզում նոյեմբերի 27-ին հարգել են ահաբեկչությունների զոհերի հիշատակը, սակայն այդ ահաբեկչություններին զոհ գնացած 17-ամյա Լույս Ուզունյանի հայրը՝ Էրիկ Ուզունյանը, բոլկոտել է հատուկ միջոցառումը՝ նվիրված ահաբեկչությունների զոհերին, հաղորդում է Sudinfo.be-ն:

Էրիկ Ուզունյանը հանդես է եկել նամակով՝ ուղղված Ֆրանսիայի կառավարությանը, որտեղ, մասնավորապես, նշել է.

«Իմ դուստրը մահացել է Բատակյանում, նա 17 տարեկան էր: Ես չեմ գնալու ահաբեկչությունների զոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը (Հաշմանդամների պետական տուն), քանի որ համարում եմ, որ կառավարությունը՝ բոլոր լիազորված պաշտոնյաների ու նախարարների հետ միասին ուղղակի պատասխանատու է այն ամենի համար, ինչ տեղի ունեցավ:

Ֆրանսիան երկար տարիներ աղետալի ձախողված քաղաքականություն է վարել Մերձավոր Արևելքում: Նիկոլա Սարկոզին խախտելով ՄԱԿ-ի կոնվենցիաները, ֆրանսիական բանակն ուղարկել է Լիբիա՝ Քադաֆիի դեմ, որն, ի դեպ, Ֆրանսիայի թշնամին չէր: Նույն Սարկոզին նախկինում ձեռքերը տարածած հանդիպել է Քադաֆիի հետ Փարիզում: Քադաֆիից հետո Լիբիայում քաոս է տիրում, եւ ողջ երկրի տարածքով կարելի է գեներ տեղափոխել: Ֆրանսուա Օլանդն ու Լորան Ֆարիուսը «կատաղել էին» Ասադի դեմ, որը նույնպես Ֆրանսիայի

թշնամին չէ, բայց որի դեմ Ֆրանսիան ընդգրկվել է կռախիցիայում: Իհարկե, մեր միջամտության գլխավոր պատճառն այն փաստն է, որ ինչպես Քաղաֆին ու Հուսեյնը, Ասադը նույնպես դաժան դիկտատոր է: Բայց նա չի տարբերվում նաև նրանցից, որոնք իշխանության են Կատարում եւ Սաուդյան Արաբիայում, որոնց հետ Ֆրանսիան հրաշայի դիվանագիտական ու առեւտրային հարաբերություններ ունի, եւ որոնք ֆինանսավորում են «Իսլամական պետությունը»:

Նման քաղաքականությունը դրամատիկ դեր խաղացել մեր երկրի համար: Մեր վերջին նախագահները խաղացել են իրենց դերը թեթեւ ու անպատասխանատու:

Շատ տասնամյակների ընթացքում Ֆրանսիան թույլ է տվել իր տարածքում, իր քաղաքներում գոտիներ, գետտոներ ստեղծել, որոնք մեր փիլիսոփաներից մեկն անվանել է «տարածք, որտեղ չկա ոչինչ»:

Մղձավանջային ուրբանիզմը, որտեղ բացարձակապես ոչինչ չկա՝ ոչ մշակութային, ոչ սպորտային ժամանակ անցկացնելու վայրեր, չկան արժանապատիվ դպրոցներ եւ ուսումնական հաստատություններ, առանց որոնց մարդասիրությունը չի կարող զարգանալ եւ գոյություն ունենալ սկզբունքորեն: Մենք այդ տարածքները կոչում ենք ոչ թե գետտո, այլ «զգայուն շրջաններ», ինչից իմաստը չի փոխվել եւ դրանց նկատմամբ քաղաքականությունը՝ նույնպես:

Քանի՞ն ենք փոխել, Բարնար Թալի, Ռեյմոնդ Բար, Նիկոլա Սարկոզի, Ֆադեյա Ամարա, Պատրիկ Կաներ. Բոլորը խոստացել են լուծել խնդիրները, բայց մենք հիմա արձանագրում ենք այդ շրջանների նկատմամբ 40-ամյա ձախողված քաղաքականության փաստը:

Արդեն տեղի է ունեցել «բաժանումը» ֆրանսիացիների եւ նրանց միջեւ, որոնք մեզ կառավարում են: Հատուկ պայմանագիրը խզվել է, էլիտայի եւ բնակչության միջեւ հսկայական անդունդ է ձեւավորվել:

Ոչինչ այլևս չի օգնի. ոչ մեր հիմնական իրավունքների կրճատումը, ոչ Ազգային ճակատի անվտանգության ուժեղացումը, միեւնույն է մարդասպանները հանգիստ անցնելու են սահմանը:

Ֆրանսիան չի կարող ապագա առաջարկել իր երիտասարդությանը: Եվրոպան չի կարող հետ կանգնել կույր ազատականության իր ճանապարհից: Նրանք, որոնց մենք ընտրել ենք, չեն կարող մեզ նոր քաղաքականություն ներկայացնել, ինչպես նաև մեր մտավորականությունը: Բացառությամբ մի քանի անունների, մտավորականությունը ոչ մի կերպ չի գիտակցում տեղի ունեցողի վտանգավորությունը: Ես սարսափի մեջ եմ իմ դատարկվող երկրի ու իմ դատեր մահվան կապակցությամբ»:

Հիշեցնենք, որ 17-ամյա հայուհին նոյեմբերի 13-ին հոր հետ ներկա է եղել Bataclan թատրոնում Eagles of Death Metal ամերիկյան ռոք խմբի համերգին: Իրարանցման ժամանակ հայր ու դուստր կորցրել էին միմյանց: Հայրը փրկվել էր, իսկ Լոյան անհետ կորել էր, եւ մի քանի օր որոնում էին նրան:

Նոյեմբերի 18-ին հարազատները ճանաչել են անհետ կորած համարվող 17-ամյա հայուհի Լոյա Ուզունյանի դին:

Նոյեմբերի 13-ի երեկոյան Փարիզում ահաբեկչությունների շարք է տեղի ունեցել: Ահաբեկիչները երեք պայթյուն են իրականացրել «Stade de France» մարզադաշտի մոտ, ինչպես նաև կրակոցներ արձակել ռեստորանում եւ պատանդներ վերցրել «Bataclan» համերգասրահում ռոք համերգի ժամանակ:

## Միջազգային

### Հայոց ցեղասպանությունն անդրադարձավ նաև Օսմանյան Թուրքիայի մյուս բոլոր քրիստոնյաների վրա.

Rhein Neckar Zeitung 20-րդ դարի ցեղասպանությունները հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքեր են խլել միայն այն պատճառով, որ այդ մարդիկ կոնկրետ կրոնական կամ էթնիկ խմբին էին պատկանում: Գերմանիայի Հայդելբերգ քաղաքի համալսարանի մեծ սրահում «Հալածված եւ բնաջնջված. Մերձավոր Արեւելքի քրիստոնյաները 1915-2015թթ.» թեմայով հիշատակի արարողություն է կայացել, գրում է Rhein Neckar Zeitung-ը: Արարողությունը կազմակերպել էին Գերմանիայում ապրող արամեացիները, որոնք նույնպես Հայոց ցեղասպանության զոհն են դարձել:



«Հարյուր տարի անց մենք հիշում ենք սպանված, սովից եւ ծարավից մահացած, անդամահատված, բռնաբարված երեխաներին, կանանց եւ տղամարդկանց»,- ասել է Գերմանիայի արամեացիների դաշինքի նախագահ Դանիել Դեմիրը: Անդրադառնալով թուրքական արշավանքներից հետո անկում ապրած արամեական քաղաքակրթությանը՝ նա նշել է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ զոհվել են նաև բազմաթիվ արամեացիներ:

«Մեր ազգի դեմ ոտնձգություններն իրենց զագաթնակետին հասան 1915թ. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ քրիստոնյաների հալածանքների ժամանակ: Այդ ջարդերն աշխարհին հայտնի են որպես Հայոց ցեղասպանություն, որը սակայն անդրադարձավ նաև Օսմանյան կայսրությունում ապրող մյուս քրիստոնյաների վրա»,- ասել է Բեռլինի Ազատ համալսարանի պրոֆեսոր Շարո Թալալը եւ հիշեցրել, որ մինչև 20-րդ դարը Օսմանյան Թուրքիայի 13 մլն բնակիչների 1/3-ը քրիստոնյաներ էին: «Հայոց ցեղասպանությանը զոհ գնաց 1.5 մլն հայ եւ 350 000 պոնտացի հույն»,- հիշեցրել է պարբերականը:

### Ադրբեջանական կողմը խոստովանել է դարաբաղյան հակամարտության պատմությունը կեղծելու փորձերը

Ադրբեջանական կողմը, ի դեմս haqqin.az եւ «Թուրան» գործակալությունների, խոստովանել է դարաբաղյան հակամարտության պատմությունը կեղծելու՝ պաշտոնական կառույցների փորձերը:

Ադրբեջանի համաձայն, մի քանի տարի առաջ ԱԱՆ հովանավորությամբ նկարահանվել է «Ասկեր» վավերագրական ֆիլմ, որում փորձ է արվել աղավաղել

պատմությունը՝ ԱԱՆ ձեռքբերումներն ունացնելու նպատակով: Դրա համար աղբրեջանցիներն ընտրել են 1993թ. Արցախում Մոնթե Մելքոնյանի սպանության փաստը: «Չզոն չեկիստները որոշել են «սեփականաշնորհել» այդ թեման եւ ներգրավել են Իբադ Հուսեյնովին՝ ինքնապաշտպանական ուժերի գրոհայիններից մեկին: 205թ. նա հիշել է, թե ինքն է սպանել Մելքոնյանին՝ կեղծ տեղեկություններ տարածելով: «Հերոսին» սկսել են գովերգել եւ ոգեւորել՝ երիտասաքրդներին կոչ անելով օրինակ վերցնել նրանից: «Ազգային անվտանգության նախարարությունն անմիջապես քարոզվելու հոտ է առել եւ հայտարարել, թե Հուսեյնովը իրենց մոտ սովորած հետախույզ է», - գրում են աղբրեջանական լրատվամիջոցները:

Մակայն ոչ Հուսեյնովը, ոչ նրա հովանավորներն ու ԱԱՆ պաշտոնյաները հաշվի չէին առել, որ Մելքոնյանի հուղարկավորությունը փաստաթղթավորված է եւ իրենց կեղծիքն արագորեն կպարզվի: Երբ այդ նյութերը նեկայացվել են ԱԱՆ-ին, դա մամուլի քարտուղրար սկսել է սպառնալ լրագրողին՝ իբր հայերի համար աշխատելու մեջ: Հենց այդ քաշքշուկի ժամանակ էլ պարզվել է ԱԱՆ-ի ներգրավվածությունը Ֆիլմի ստեղծմանը: «Միեւնույն ժամանակ աղբրեջանական զինվորականները հայտնվել էին անհեղթեթ վիճակում», - գրում են աղբրեջանական պարբերականները:

## Պարագվայի սենատորն առաջարկել է Հայոց ցեղասպանության զոհերին փոխհատուցում վճարել



Պարագվայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կընդլայնի ճանաչման գործընթացը եւ կօգնի փրկել պատմական հիշողությունը: Այդ մասին արգենտինական Agencia Prensa Armenia արգենտինական պարբերականին հայտնել է Պարագվայի սենատի անդամ Դեզիրե Մասին, որը Պարագվայի Կոնգրեսում ներկայացրել էր Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ նախագիծը: «Մենք ճնշման հանդիպեցինք, հատկապես՝ «ցեղասպանություն» բառի հետ կապված, - ասել է նա: Այնուամենայնիվ, որոշումը միաձայն ընդունվեց: «Ինչ-որ կերպ պիտի փոխհատուցում վճարվի: Մենք հետաքրքրված ենք դրանում: Ոչ միայն ճանաչմամբ, ինչը շատ կարեւոր է, այլև դրան հետեւելիք ինչ-որ տեսակի փոխհատուցմաման հնարավորությամբ», - հավելել է սենատորը:

Պարագվայի սենատը հոկտեմբերի 29-ին միաձայն որոշում է կայացրել Հայոց ցեղասպանության ճանաչման վեաբերյալ:

## Եթե իմանայինք օդանավը ռուսական է, չէինք խփի. Թուրքիայի կառավարության խոսնակ



Երանի նման խախտում տեղի չունենար. Թուրքիան եւ Ռուսաստանը երկու հարեւան երկրներ են, որոնք զարգացրել են բարեկամական հարաբերություններ: Նման հայտարարություն է արել Թուրքիայի փոխվարչապետ, կառավարության խոսնակ Նուրման Բուրթուլմուշը: Թուրքական Haberler-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի կառավարության խոսնակը հայտարարել է, թե օդանավը խոցելու ժամանակ հայտնի չի եղել, դրա երկրի ծագումը, սակայն մի քանի անգամ զգուշացվել է մինչ հարված հասցնելը: «Եթե իմանայինք, որ այն ռուսական օդանավ է, նման դեպք չէր գրանցի», - ասել է Նուրման Բուրթուլմուշը:

## Իրանը հայտարարել է «Լուկոյի» հետ պայմանագրեր կնքելու մասին



Իրանի իշխանությունները պատրաստվում են նոյեմբերի 28-29-ին, 50 նավթային եւ գազային հանքավայրերի մշակման պայմանագրեր կնքել, որոնց ընդհանուր արժեքը 30 մլրդ դոլար է կազմում, հաղորդում է Bloomberg-ը: Սպասվում է, որ խոշորագույն ներդրողներից մեկը կլինի «Լուկոյ» նավթագազային համալիրը: «Շատ ընկերություններ են հետաքրքրված՝ եվրոպական եւ ասիական», - ասել է Իրանի նավթի նախարար Բիջան նամդար Չանգանեն: Մասնավորապես, նրա խոսքով, խոսքը այնպիսի ընկերությունների մասին է, որոնցից են «Լուկոյը», Total-ը, Royal Dutch Shell-ը եւ Eni-ն: Ռուսական

ընկերությունում ձեռնպահ են մնացել մեկնարանություններից, նշում է Rambler News Service-ը: Մերձավոր Արեւելքում Total-ի հետախուզության եւ արդյունահանման գծով դեկավար Ստեֆան Միշելն իր հերթին նշել է, որ ընկերությանը հետաքրքիր կլինեք վերադառնալ Իրան, երբ հանվեն տնտեսական պատժամիջոցները, եթե իհարկե պայմանագրերը գրավին լինեն: «Մենք երկար աշխատել ենք այս երկրում, այնպես որ մենք ծանոթ ենք որոշակի հանքավայրերի, որտեղ նախկինում աշխատել ենք», - ընդգծել է նա, հաղորդում է Lenta-ն:

## Հասարակական

### Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն



Տարածքը՝  
29,8 հզ. կմ<sup>2</sup>  
Մայրաքաղաքը՝  
Երևան  
Բնակչությունը՝  
3,362 մլն (1989 թ.)  
Բնակչության խտությունը՝  
110,3 մարդ/կմ<sup>2</sup>  
Պետական լեզուն՝  
հայերեն  
Դրամական միավորը՝  
ռուբլի



Մարգիս Կասյան  
(1876–1937 թթ.)



Ալեքսանդր Բեկգադյան  
(1879–1939 թթ.)



Մարգիս Լուկաշին  
(1883–1937 թթ.)



Սահակ Տեր-Պարրիեյան  
(1886–1937 թթ.)



**Աղասի Խանջյան**  
(1901-1936 թթ.)



**Գրիգոր Հարությունյան**  
(1900-1957 թթ.)



**Յակով Զարոբյան**  
(1908-1980 թթ.)



**Անտոն Քոչինյան**  
(1913-1990 թթ.)



**Երևանի քիմիական գործարանի  
ընթացիկ արտադրամասը**



**Բենտոնիտային կավերի կոմբինատը Իջևանի շրջանի  
Ագատամուտ ավանում**





**Երևանի «Արարատ» տրեստի կոնյակի հնեցման արտադրամասը**




**Եթերայուղի արտադրամաս Հոկտեմբերյանում (այժմ՝ Արմավիր)**



**Տարևի ջրաէլեկտրակայանը**



**Կիրովականի քիմիական գործարանը**



**Յորենի բերրահավաք**



**Անասնապահական ֆերմայում**



**Քոստանային մշակաբույսերի  
դաշտ Արարատի շրջանի  
Ավշար գյուղում**



**Երևանի «Մասիս»  
կոշիկի արտադրական  
միավորումում**



**Արոտավայր Մարտունու շրջանի  
Աստղածոր գյուղում**



**Էջմիածնի համակցված  
կերերի գործարանը**



**Շամբի ջրամբարը Մխիթանի շրջանում**



**Կեչուտի ջրամբարը՝  
ջրնետ կառույցով**



**Մայիսի 6-ի շքերթ Երևանում,  
1986 թ-ին**



**Բողոքի ցույց Երևանում, 1988 թ-ին**



**Զրոսաշրջային գոտի  
Սևանա լճի ափին**



**Հանրապետական**

**Կլինիկական  
հիվանդանոց Երևանում**



**Մոր և մանկան առողջության  
պահպանության կենտրոնը  
Երևանում**



**Սպորտային շքերթ  
Երևանում**



**Մարզական տոնահանդես  
պիոներական ճամբարում**



**ԶԶ հեռուստատեսային  
աշտարակը Երևանում**



**Տեսարան Չարգանդ Դարյանի «Հանրապետության  
նախագահը» պիեսի ներկայացումից (1970 թ.,  
ռեժիսոր՝ Վարդան Աճեմյան, Երևանի  
Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոն)**



**«Սևան ՀԷԿ-ի շինարարների  
հաղթանակը» (1947 թ., նկարիչ՝  
Հովհաննես Չարդարյան)**




**«Փառք աշխատանքին»  
(1982 թ., քանդակագործ՝  
Արա Հարությունյան,  
ապամոնտաժվել է 1989 թ-ին)**



«Վերածնված Հայաստան»  
(1983 թ., քանդակագործ՝  
Խորեն Տեր-Հարության, Երևան)



Կադր «Նոան գույնը» կինոնկարից  
(1968 թ., ռեժիսոր՝ Սերգեյ Փարաջանով)



Տեսարան Արմեն Տիգրանյանի

«Անուշ» օպերայի բեմադրությունից  
(1939 թ., Երևանի օպերայի և  
բալետի թատրոն)



Մարգահամերգային համալիրը [1984 թ. (1999 թ-ից՝  
Կարեն Դեմիրճյանի անվան),  
ճարտարապետներ՝ Արթուր Թարխանյան, Հրաչյա  
Պողոսյան, Սպարտակ Խաչիկյան, Կորյուն Հակոբյան]



«Հայաստան» հուշահամալիրը Երևանում  
(«Կասկադ», 1980 թ., ճարտարապետ՝  
Ջիմ Թորոպյան)

**Հայկական Խորհրդային  
Սոցիալիստական Հանրապետությունը  
(ՀԽՍՀ) հռչակվել է 1920 թ-ի նոյեմբերի  
29-ին և գոյատևել մինչև 1991 թ-ի  
սեպտեմբերի 23-ը:**

**Հասարակական-քաղաքական կյանքը և  
տնտեսությունը**

Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ), որ ստեղծվել էր Խորհրդային Ադրբեջանում, 1920 թ-ի նոյեմբերի 29-ին, Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի աջակցությամբ, մուտք գործեց Հայաստան և երկիրը հռչակեց անկախ Խորհրդային սոցիալիստական հանրապետություն: Դեկտեմբերի 2-ին Երևանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի առաջին հանրապետության Կառավարության միջև կնքվեց համաձայնագիր, որով իշխանությունը հանձնվեց Հայաստանի ՌՀԿ-ին: Մինչև վերջինիս ժամանումը Երևան՝ իշխանությունը հանձնվեց զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի (Դրաստամատ Կանայան) զլխավորությամբ: Հայաստանի հեղափոխական կոմիտեն (հեղկոմ, նախագահ՝ Սարգիս Կասյան), դեկտեմբերի սկզբներին ժամանելով Երևան, ամբողջ իշխանությունը

վերցրեց իր ձեռքը և, հակառակ պայմանավորվածության, դաշնակցականներին տեղ չստացնելու Կառավարությունում:

Երկրում իշխանությունը գործում էր հեղկոմների միջոցով, որոնք օրենսդիր և գործադիր մարմիններ էին: Հայկեղկոմի առաջին ղեկընտրված (որոշում) ստեղծվեց Արտակարգ հանձնաժողով (ռուսերեն՝ ՉԵԿԱՄ Չրեզվիչայնայա կոմիսիա): Նախկին դատական համակարգը փոխարինվեց «ժողովրդական դատարաններով» և «հեղափոխական տրիբունալներով»: 1921 թ-ի հունվարին ծառայությունից ազատվեց բանակի հրամանատար Դրոն: Կայանավորվեց և Բարքի բանտ ու ՌԽՖՍՀ Ռյազան քաղաքի համակենտրոնացման ճամբար ուղարկվեց Հայաստանի Հանրապետության բանակի շուրջ 1400 սպա:

ՀԽՍՀ իշխանությունները երկրի տնտեսության մեջ կիրառեցին Ռուսաստանում իրականացվող, բայց իրեն արդեն սպառած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը՝ պարենմասնատրումը: Հացի և այլ մթերքների ու ապրանքների բռնագրավումը վերածվեց ժողովրդի, առաջին հերթին՝ գյուղացիության կողոպուտի, որի հետևանքով երկրում սաստկացան սովն ու դժգոհությունը: 1921 թ-ի փետրվարին կատարված նոր ձերբակալություններն ու գնդակահարություններն ավելի բարդացրին իրադրությունը՝ հանգեցնելով համաժողովրդական ապստամբության, որը տևեց շուրջ 40 օր: 1921 թ-ի ապրիլի 2-ին բոլշևիկյան զորքերը վերագրավեցին Երևանը և երկրում վերահաստատեցին իրենց իշխանությունը: Մայիսի 21-ին հեղկոմը վերակազմվեց ՀԽՍՀ Ժողկոմխորի, կազմվեց Կառավարություն՝ Ալեքսանդր Մյասնիկյանի նախագահությամբ:

Ապստամբության ժամանակ ստեղծված Հայաստանի փրկության կոմիտեն հեռացավ Ինքնավար Մյունխեն, որն այդ օրերին խորհրդա-ադրբեջանական վտանգից պաշտպանում էր Գարեգին Նժդեհը: Այն վերանվանվեց Լեռնահայաստանի Հանրապետություն. կառավարությունը գլխավորեց Միմոն Վրջյանը, իսկ ապարապետ նշանակվեց Գարեգին Նժդեհը: 1921 թ-ի հունիսին, երբ վերացավ Չանգեզուրն Ադրբեջանին կցելու վտանգը, խորհրդային իշխանությունը հաստատվեց նաև այդ երկրամասում, և այն միացավ ՀԽՍՀ-ին:

1921 թ-ի մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Հայկական ԽՍՀ-ի և Թուրքիայի միջև սահմանն անցկացվեց Ախուրյան և Արաքս գետերով: Թուրքիային տրվեց նաև Սուրմալուի գավառը, որ երբևէ նրա կազմում չէր եղել: Նախիջևանի երկրամասը և Շարուրի գավառը հանձնվեցին Ադրբեջանին: Հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով վավերացվեց հայկական տարածքների այդ բռնագրավումը: 1921 թ-ի հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց Ադրբեջանի մաս, և առաջարկվեց կազմավորել ինքնավար մարզ: Այդ նույն ժամանակ Վրաստանին բռնակցվեցին Լոռու հյուսիսային շրջանները և Ախալքալաքը: Միայն 1923 թ-ի հուլիսին ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների պարտադրանքով կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանի կազմում:

1922 թ-ի հունվարից ՀԽՍՀ իշխանության նշանակովի մարմինները՝ հեղկոմները, փոխարինվեցին բնորովի մարմիններով՝ խորհուրդներով: 1922 թ-ի փետրվարին ընդունվեց ՀԽՍՀ առաջին Սահմանադրությունը, որը նաև առաջինն էր հայոց պետականության պատմության մեջ: Նույն թվականին ՀԽՍՀ-ն ընդգրկվեց նորաստեղծ Անդրկովկասյան Խորհրդային Ֆեդերատիվ

Մոցիալիստական Հանրապետության (ԱՄՖՍՀ) և նրա հետ՝ նորաստեղծ ԽՍՀՄ կազմի մեջ. ԱՄՖՍՀ-ի լուծարումից հետո՝ 1936 թ-ի դեկտեմբերի 5-ից, ՀԽՍՀ-ն ինքնուրույն միութենական հանրապետություն էր ԽՍՀՄ կազմում:

1921 թ-ի գարնանից Խորհրդային Ռուսաստանի օրինակով Հայաստանն անցավ նոր տնտեսական քաղաքականության (ռուսերեն՝ նեպ, նովայա էկոնոմիչեսկայա պոլիտիկա), որը փոխարինեց «ռազմական կոմունիզմին» և շարունակվեց մինչև 1928 թ.: Մտցվեց պարենային հարկ, թույլատրվեցին ապրանքադրամական հարաբերություններ, շուկայի, սեփականության տարբեր ձևեր, օտարերկրյա կապիտալի մուտքը տնտեսության մեջ և այլն: Նեպ-ի շնորհիվ վերականգնվեցին Հայաստանի գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը, ոռոգման համակարգը, կառուցվեցին նոր Էջմիածնի, Շիրակի և այլ ջրանցքներ: 1925 թ-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքը գերազանցեց նախապատերազմյան տնտեսության ամենաբարձր՝ 1913 թ-ի մակարդակը: Սկսեցին գործել էլեկտրակայաններ, վերականգնվեցին պղնձահանքերն ու պղնձաձուլարանները, գինու և կոնյակի արտադրությունը հասավ 1913 թ-ի մակարդակին:

1920-ական թվականների վերջին սկսվեց երկրի ինդուստրացումը, որը համարվում էր սոցիալիզմի կառուցման հիմնական պայման: Մշակվեցին երկրի տնտեսության զարգացման հնգամյա պլաններ: Արագորեն զարգացավ էներգետիկան. կառուցվեցին Քանաքեռի, Չորագետի և այլ ջրէկներ: Էլեկտրաէներգիայի արտադրության անը նպաստեց գերազանցապես էներգատար ճյուղերի, հատկապես քիմիական արդյունաբերության զարգացմանը երկրում, որի շնորհիվ ՀԽՍՀ-ն 1930-ական թվականների վերջին վերածվեց գերազանցապես արդյունաբերական երկրի: Այդ տարիներին արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը տնտեսության համախառն արտադրանքի 70 % էր: Արդյունաբերության զարգացման շնորհիվ ՀԽՍՀ քաղաքային բնակչությունը, 1939 թ-ի մարդահամարի տվյալներով, հասավ 28,6 %-ի (1913 թ-ին՝ 10,4 %): Քաղաքային բնակչության անը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակներում: Նախապատերազմյան խոշոր կառույցներից էին Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանը, Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը: Հիմնադրվեցին Արթիկտուֆ և Անիպեմգա տրեստները և այլն:

1930-ական թվականների սկզբներին, երկրի պարենային հարցերը լուծելու նպատակով, բռնի կերպով վերացվեցին գյուղացիական մասնավոր տնտեսությունները, և ստեղծվեցին կոլեկտիվ տնտեսություններ (նաև խորհունտեսություններ՝ սովխոզներ): Ի պատասխան բռնի կոլեկտիվացման քաղաքականության՝ գյուղացիների զգալի մասը կանխամտածված փչացնում էր բերքը, մորթում անասունները և դիմում զինված պայքարի: Դրանց հաջորդեցին ստալինյան նոր բռնաճնշումները: Կոլեկտիվացումը Հայաստանում հիմնականում ավարտվեց 1935-37 թթ-ին, իսկ պատերազմի նախօրեին (1941 թ-ի հունիս) հանրապետության կոլեկտիվ տնտեսությունների թիվը հասավ 1000-ի:

Բռնաճնշումների հաջորդ այիքը ծավալվեց 1930-ական թվականների 1-ին կեսին՝ գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում: «Կուլակաթափ» արվեցին և ՀԽՍՀ-ից արտաքսվեցին մի քանի հազար գյուղացիական ընտանիքներ: 1936 թ-ի հուլիսին Թիֆլիսում սպանվեց ՀԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ադասի Խանջյանը:

Ձերբակալվեցին գրողներ, մշակույթի գործիչներ, հանրապետության պետական և կուսակցական ղեկավարներ, հեղկոմի նախկին անդամներ, բռնադատվեցին բազմաթիվ հոգևորականներ: Բռնադատվածների ընդհանուր թիվն անցավ 25 հզ-ից. կեսը գնդակահարվեց, մնացածները կալանավորվեցին ու տեղափոխվեցին տարբեր ճամբարներ:

Հայ ժողովուրդը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ մասնակցեց Հայրենական մեծ պատերազմին (1941–45 թթ.): Բանակ գորակոչվեց շուրջ 500 հզ. հայ ՀԽՍՀ-ից, Ղարաբաղից, Վրաստանից, Ռուսաստանից, Խորհրդային Միության հայաբնակ այլ վայրերից: Ռազմի դաշտում էին հայկական 76-րդ, 89-րդ (Թամանյան), 390-րդ, 408-րդ, 409-րդ ազգային զորամիավորումները: ՀԽՍՀ-ի սահմանները պաշտպանում էր 261-րդ դիվիզիան:

Պատերազմի տարիներին հանրապետությունում ավելացավ սինթետիկ կաուչուկի, պղնձի, կարբիդի արտադրությունը, կառուցվեցին շուրջ 30 արդյունաբերական նոր ձեռնարկություններ: Գյուղացիությունը կատարեց գյուղատնտեսական մթերքների արտադրության պետական առաջադրանքները:

Պատերազմի ավարտին ԽՍՀՄ-ի ղեկավարությունը փորձեց Կարսը և Արդահանը վերադարձնել ՀԽՍՀ-ին, սակայն, հանդիպելով դաշնակից պետությունների դիմադրությանը, ձեռնպահ մնաց:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ որոշ չափով թուլացավ խորհրդային ամբողջատիրական համակարգի գաղափարական «աքցանը»: Սակայն հիտլերյան համակենտրոնացման ճամբարներից փրկված խորհրդային տասնյակհազարավոր ռազմագերիներ դարձյալ ազատագրվեցին: Ավելին՝ 1949 թ-ի հունիսի 14-ին ՀԽՍՀ-ից 13 հզ. հայ բռնադատվեց և արքարվեց: Հազարավոր հայեր արքարվեցին նաև Վրաստանից, Ադրբեջանից և այլ հանրապետություններից: Առհասարակ՝ խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում բռնադատվեց շուրջ 42 հզ. մարդ. զգալի մասը գնդակահարվեց:

Պատերազմի տարիներին Հայ եկեղեցու օգնությունն ստանալու ակնկալիքով նրա նկատմամբ մեղմացվեց պետական վերաբերմունքը: 1945 թ-ի ապրիլի 19-ին Ստալինն ընդունեց կաթողիկոսի տեղապահ Գևորգ Չորեքյանին, իսկ հունիսի 16-ին Սբ Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը նրան ընտրեց Ամենայն հայոց կաթողիկոս (Գևորգ Չ Չորեքյան):

1945 թ-ի նոյեմբերին ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը որոշում ընդունեց սփյուռքահայերի հայրենադարձությունը կազմակերպելու մասին: Առաջին քարավանը Բեյրութից Հայաստան հասավ 1946 թ-ի հունիսին: 1946–48 թթ-ին 12 երկրից հայրենադարձվեց շուրջ 90 հզ. հայ:

Ստալինի մահից (1953 թ.) հետո սկսվեց այսպես կոչված «խորուշովյան ձնհալի» ժամանակաշրջանը (1954–64 թթ.). երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցավ որոշակի ազատականացում: Արդարացվեցին (հիմնականում հետմահու) 1930-ական թվականների բռնադատվածներից շատերը, վերադարձան 1949 թ-ին արքարված հազարավոր հայ ընտանիքներ: Հայաստանի մտավորականությունը հնարավորություն ունեցավ արձարձելու Հայ դատի, կորցրած տարածքների վերադարձի, ազգի համախմբման և այլ հիմնախնդիրներ: Այս նպատակներն էին հետապնդում 1960-ական թվականներին Հայաստանում ստեղծված ընդհատակյա՝ Ազգային միացյալ կուսակցությունը, Հայ հայրենասերների միությունը և այլ կազմակերպություններ:

1965 թ-ի ապրիլի 24-ին Մեծ եղեռնի 50-րդ տարելիցի կապակցությամբ, Երևանում համազգային մեծ ցույց

կազմակերպվեց, որը ԽՍՀՄ պատմության մեջ առաջին տարեկային ու զանգվածային ելույթներից էր: ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Յակով Չարոբյանի (1960–66 թթ.) աջակցությամբ 1965 թ-ին որոշում ընդունվեց Ծիծեռնակաբերդում կառուցել Եղեռնի գոհերին նվիրված հուշարձան (բացումը՝ 1967 թ-ին): 1968 թ-ին նշվեց Մարդարապատի հերոսամարտի 50-ամյակը, բացվեց Մարդարապատի հուշարձան-համալիրը, 1974 թ-ին՝ ազգագրության թանգարանը:

1964 թ-ին ԽՍՀՄ-ում իշխանության եկավ Լեոնիդ Բրեժնևը. հաստատվեց բրեժնևյան պահպանողականների տիրապետությունը: Աստիճանաբար վերացվեցին նշմարվող ազատությունները, կրկին ամրապնդվեց վարչաիրամայական համակարգը, երկրում սկսվեց տեղատվության և լճացման տևական փուլ:

Հետպատերազմյան առաջին տասնամյակում հանրապետությունում կառուցվեցին նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ ու ջրանցքներ, քաղաքներ ու ավաններ: Այդ գործում զգալի ավանդ են ունեցել ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Գրիգոր Հարությունյանը (պաշտոնավարել է 1937–53 թթ-ի ժամանակ տարիներին) և Սուրեն Թովմայանը (1953–60 թթ-ին): Նախագծվեց Սևան-Հրազդան կասկադը, գործարկվեցին Սևանի (1949 թ.), Գյումուշի (այժմ՝ Կարենիս, 1953 թ.) ջրէկները, 1960-ական թվականներին Երևանում, Հրազդանում, Կիրովականում կառուցվեցին հզոր ջէկեր: Երկրի տնտեսական զարգացումը շարունակվեց նաև ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարներ Անտոն Քոչինյանի (1966–74 թթ.) և Կարեն Դեմիրճյանի (1974–89 թթ.) օրոք: Կառուցվեց Հայկական ատոմակայանը, որի առաջին էներգաբլոկը գործարկվեց 1976 թ-ին, իսկ երկրորդը՝ 1979 թ-ին: Կառուցվեցին Երևանի «Պոլիվինիլացետատ», Ալավերդու լեռնաքիմիական գործարանները, Կիրովականի ազոտային պարարտանյութերի արտադրամասը և այլն: 1970-ական թվականներից շրջակա միջավայրի պահպանության նկատառումներով կարևորվեց համեմատաբար անվտանգ՝ դեղագործական, կենցաղային քիմիայի ձեռնարկությունների զարգացումը:

Կազմակերպվեց մոլիբդենի, ոսկու, մի շարք հազվագյուտ մետաղների արտադրություն: Աստիճանաբար ՀԽՍՀ արդյունաբերության առաջատար ճյուղ դարձավ մեքենաշինությունը: Ընդլայնվեցին շինանյութերի, թեթև, սննդի արդյունաբերության արտադրական կարողությունները: Մինչև 1980-ական թվականների վերջը հանրապետությունում կառուցվեցին շուրջ 600 մեծ և փոքր արդյունաբերական ձեռնարկություններ: Ընդունվեց փոքր քաղաքների զարգացման ծրագիր: Կառուցվեցին արդյունաբերական նոր կենտրոններ Հրազդանը, Չարենցավանը, Դիլիջանը, Սևանը, Նոր Հանը, Աբովյանը և այլն: Արդյունաբերական նվաճումները պայմանավորված էին նաև գիտության տարբեր ճյուղերի առաջընթացով: Հայկական ԽՍՀ-ում ստեղծվեց հզոր գիտական ներուժ: Գիտության զարգացումն ապահովում էին 1943 թ-ին ստեղծված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան՝ իր գիտահետազոտական ինստիտուտներով, ինչպես նաև բուհերը: 1960–80-ական թվականներին բարելավվեց հանրապետության ճանապարհատրանսպորտային համակարգը: Կառուցվեցին Սևան-Շորժա-Չող, Մասիս-Նուռնուս, Իջևան-Հրազդան երկաթուղիները, մի շարք ավտոմայրուղիներ, Երևանի մետրոպոլիտենը, մայրաքաղաքի «Չվարթոնոց», «Էրեբունի», նաև Լենինականի օդանավակայանները: Սևանա լճի մակարդակը պահպանելու նպատակով 1961 թ-ին սկսվեց

48-կմ-անոց Արփա-Սևան ջրատար թունելի կառուցումը, որը շահագործման հանձնվեց 1981 թ-ին:

Հետպատերազմյան շրջանում մեծ ներդրումներ կատարվեցին գյուղատնտեսության ոլորտում. 1947– 1965 թթ-ին ոռոգելի հողատարածություններն ավելացան 48 հզ. հա-ով, յուրացվեց 16 հզ. հա ճահճուտ: 1960–80-ական թվականներին կառուցվեցին Արգնի–Շամիրամ, Որոտանի, Ախուրյանի ջրանցքները, շահագործման հանձնվեցին մի շարք ջրհան կայաններ ու ջրամբարներ: Այդուհանդերձ, գյուղատնտեսությունը պարբերաբար հայտնվում էր ճգնաժամային իրավիճակում:

1985 թ-ին, հավատարմվ ԽՄԿԿ կենտկոմի նորընտիր գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովի «վերակառուցման» քաղաքականությանը, ԼՂԽՄ-ի հայրությունը դարձյալ առաջ քաշեց մարզը ՀԽՍՀ կազմում ընդգրկելու հարցը: 1988 թ-ին սկսվեց Ղարաբաղյան ազատագրական շարժումը:

Հանրապետության տնտեսությունն զգալի կորուստ կրեց 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի Մախտակի երկրաշարժից. ավերվեց հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանների արդյունաբերության և բնակելի ֆոնդի 40 %-ը: ԽՍՀՄ հանրապետությունները, բազմաթիվ երկրներ, զանազան միջազգային կազմակերպություններ և Միություն զգալի օգնություն ցուցաբերեցին երկրաշարժից տուժած շրջաններին:

1990 թ-ի մայիսին Հայկական ԽՍՀ-ում առաջին անգամ տեղի ունեցան Գերագույն խորհրդի (ԳԽ) այլընտրանքային ընտրություններ, և ժողովրդավարական ուժերի հաղթանակով հանրապետությունում ավարտվեց խորհրդային հասարակարգի 70-ամյա շրջանը: ԳԽ նախագահ ընտրվեց հաղթած՝ «Հայոց համազգային շարժում» կազմակերպության վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Նույն թվականի օգոստոսի 23-ին ՀԽՍՀ ԳԽ-ն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: 1991 թ-ի սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացված հանրաքվեով նույն ամսի 23-ին Հայաստանի Հանրապետության ԳԽ-ն Հայաստանը հռչակեց անկախ, ինքնիշխան պետություն:

1991 թ-ի սեպտեմբերի 2-ին անկախություն է հռչակել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Անկախացան նաև միութենական մյուս հանրապետությունները, և 1991 թ-ի դեկտեմբերին ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեց գոյություն ունենալուց:

## Առողջապահություն, զբոսաշրջություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ

**Առողջապահություն:** Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո պետությունը զանգվածային պայքար է ծավալել սուր վարակիչ հիվանդությունների (բժավոր տիֆ, բնական ծաղիկ, կարմրուկ, քութեշ) կանխարգելման և դրանց պատճառների վերացման համար: Իրականացվել են զանգվածային կանխարգելիչ միջոցառումներ, կազմակերպվել է պայքար մալարիայի դեմ. 1963 թ-ին մալարիան վերացել է ընդհանրապես:

1930-ական թվականներին հիմնվել է Արյան փոխներարկման հանրապետական կայանը (1947-ից՝ Արյունաբանության և արյան փոխներարկման գիտահետազոտական ինստիտուտ):

Հետպատերազմյան տարիներին հիմնադրվել են մի շարք մասնագիտացված ինստիտուտներ, միավորվել են ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներն ու

հիվանդանոցները, ստեղծվել բուժմիավորումներ: 1951 թ-ին կազմակերպվել է Աշխատանքի հիգիենայի և պրոֆեսիոնալ հիվանդությունների գիտահետազոտական ինստիտուտը: Որպես բուժկանխարգելիչ միջոցառում՝ սկսվել է հիվանդների դիսպանսերացումը: Արդյունաբերական խոշոր հիմնարկներում ստեղծվել են բժշկասանիտարական մասեր: Խոշորացվել են շրջանային կենտրոնական հիվանդանոցները, ստեղծվել միջշրջանային բաժանմունքներ:

1983 թ-ին ստեղծվել է ախտորոշիչ կենտրոն, որն իրականացրել է ազգաբնակչության համընդհանուր դիսպանսերացում:

1922 թ-ին Երևանում ստեղծվել է կանանց առաջին կոնսուլտացիան, 1931 թ-ին՝ Մայրության և մանկության պահպանության ինստիտուտը (1937 թ-ից՝ Մանկաբարձության և գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ, 1989 թ-ից՝ Մոր և մանկան առողջության պահպանման ՀԽՍՀ կենտրոն), ընդլայնվել է մանկական բուժօգնությունների, կոնսուլտացիաների, ծննդատների և կաթնախոհանոցների ցանցը:

1940 թ-ից սկսել են գործել մանկական հատուկ առողջարաններ: 1988 թ-ին ՀԽՍՀ-ում կային այդպիսի 42 առողջարան ու հանգստյան տուն: Ստեղծվել են սանիտարապուստիկական տներ, Կարմիր խաչի կազմակերպություններ: 1956 թ-ից հրատարակվում է «Առողջապահություն» հանդեսը:

Բժշկական կադրեր պատրաստվել են 1921 թ-ին հիմնադրված բժշկական դպրոցում, 1922 թ-ից՝ Երևանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում (1930 թ-ից՝ Երևանի բժշկական ինստիտուտ, 1995-ից՝ Երևանի պետական բժշկական համալսարան), վերապատրաստվել 1961 թ-ին ստեղծված Բժիշկների կատարելագործման ինստիտուտում (1997-ից՝ Առողջապահության ազգային ինստիտուտ):

**Զբոսաշրջությունը** ՀԽՍՀ-ում սկսել է զարգանալ 1930-ական թվականներից: 1932 թ-ին հիմնվել է «Ինտուրիստ» համամիութենական բաժնետիրական ընկերության Երևանի գործակալությունը: 1936 թ-ից զբոսաշրջությունը ղեկավարել է Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը: 1952 թ-ին կազմակերպվել են Երևանի տուրիստական էքսկուրսիոն և Թ-ումանյան ավանի տուրիստական բազաները, ստեղծվել «Երևան» (1952 թ.) և «Հայաստան» (1953 թ.) տուրիստական երթուղիները:

1954 թ-ին հանրապետությունն ընդգրկվել է համամիութենական տուրիստական երթուղիներում, ճանապարհորդությունների և էքսկուրսիաների բյուրոներ են բացվել Երևանում (1962 թ.), Լենինականում (1964 թ.), Կիրովականում (1966 թ.):

1963 թ-ին կազմակերպվել են «Արմենիա» տուրիստական առաջին գնացքը և նավով ուղևորություններ Վոլգա գետով, 1968 թ-ին՝ առաջին անգամ Սև ծովով: 1970 թ-ից ինքնաթիռով տուրիստական ուղևորություններ են կազմակերպվել Մոսկվա, Լենինգրադ, Ռիգա և այլ քաղաքներ:

1970–80-ական թվականներին զբոսաշրջիկների համար շահագործման են հանձնվել մի շարք հյուրանոցներ, ստեղծվել են ճանապարհորդությունների և էքսկուրսիաների բյուրոներ, 1972 թ-ին՝ ՀԼԿԵՄ ԿԿ «Սպուտնիկ» միջազգային երիտասարդական տուրիստական կազմակերպությունը:

**Ֆիզկուլտուրայի և սպորտի** տարածմանը երկրում մեծապես նպաստել են 1921 թ-ին Երևանում,



Ալեքսանդրապոլում, ապա նաև այլ բնակավայրերում ստեղծված մարզական խմբակներն ու պատանի կոմունարների կազմակերպությունները:

1926 թ-ի օգոստոսին Երևանում տեղի է ունեցել համահայաստանյան առաջին սպարտակիադան: 1928 թ-ին 40 հայ մարզիկներ մասնակցել են համամիութենական առաջին սպարտակիադային (Մոսկվա): Ծանրամարտի 1937 թ-ի ԽՍՀՄ առաջնությունում հայ մարզիկները սահմանել են հանրապետական 16 ռեկորդ: Ֆիզիկական դաստիարակության համակարգը հետագայում զարգացել է 1931 թ-ին ընդունված ՊԱՊ համալիրի դրույթներով:

1986 թ-ին Հայաստանում գործել են 8 կամավոր մարզական ընկերություններ՝ «Աշխատանք», «Սևան», «Դինամո», «Սպարտակ», «Բուրեվետսոնիկ», «Աշխատանքային ռեզերվներ», «Չենիթ» և «Լոկոմոտիվ»:

Ֆիզկուլտուրայի բնագավառի կադրեր են պատրաստել Երևանի ֆիզկուլտուրայի տեխնիկումը (1931 թ.) և ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը (1945 թ.), Լենինականի Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզդաստիարակության ամբիոնը (1947 թ.):

Մարզական բաժանմունքներ, խմբեր ու ակումբներ են ստեղծվել ԴՕՍԱԿԻ-ի սկզբնական կազմակերպություններին, արտադրական խոշոր ձեռնարկություններին կից: 1971 թ-ին շահագործման է հանձնվել «Հրազդան» կենտրոնական մարզադաշտը, 1984 թ-ին Ծիծեռնակաբերդի մարզահամերգային համալիրը:

ՀԽՍՀ-ում անցկացվել են մարզական խոշոր միջոցառումներ՝ հանրապետական սպարտակիադաներ (4 տարին՝ մեկ), երիտասարդական և ուսանողական խաղեր, պրոֆտեխկրթության համակարգի սովորողների, դպրոցականների սպարտակիադաներ, մարզական ընկերությունների համալիր մրցումներ, մանկապատանեկան զանգվածային ու ռազմամարզական խաղեր:

Հայ մարզիկները հաջողությամբ հանդես են եկել համամիութենական և միջազգային մրցասպարեզներում: Հանրապետության 25 մարզիկներ ԽՍՀՄ օլիմպիական հավաքականի կազմում մասնակցել են 1952–88 թթ-ի օլիմպիական խաղերին և նվաճել 11 ոսկե, 10 արծաթե ու 7 բրոնզե մեդալներ: Օլիմպիական չեմպիոններ են դարձել մարմնամարզիկներ Հրանտ Ծահինյանը, Արթուր Ազարյանը, Էդուարդ Ազարյանը, բռնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբաբյանը, ծանրամարտիկներ Յուրի Վարդանյանը, Օզգեն Միրզոյանը, Իսրայել Միրխոսյանը, սկավառակներտորդ Ֆահմա Մելնիկը, հնգամարտիկ Իգոր Նովիկովը, ըմբիշ Լևոն Ջուլֆալալյանը, հրաձիգ Հրայսա Պետիկյանը:

Աշխարհի (նաև Եվրոպայի) չեմպիոններ են դարձել բռնցքամարտիկներ Դավիթ Թորոսյանը, Իսրայել Հակոբկոխյանը, ըմբիշներ Նորայր Մուշեղյանը, Բենուր Փաշայանը, սամբիստներ Գառնիկ Հովհաննիսյանը, Գուրգեն Թուրթալյանը, մարմնամարզիկ Արթուր Հակոբյանը և ուրիշներ, հրաձիգ Չինաիդա Միմոնյանը, շախմատիստ Ռաֆայել Վահանյանը և ուրիշներ:

Եվրոպայի չեմպիոններ են եղել ըմբիշ Արշակ Սանդյանը, ջրացատկորդ Դավիթ Համբարձումյանը, բռնցքամարտիկներ Վլադիմիր Ենգիբաբյանը, Սամսոն Խաչատրյանը, բասկետբոլիստներ Վիտայի Չաստուխովը, Արմենակ Ալաջաջյանը, հեռացատկորդներ Իգոր Տեր-Հովհաննիսյանը, Ռոբերտ Էմմիլյանը, սուզապողող Շավարշ Բոչայրյանը, ծանրամարտիկ Վարդան Միրխոսյանը:

1950-ից հայ մարզիկները մասնակցել են սեղանի թենիսի համամիութենական մրցաշարերին. առավել հայտնի են

Ռիտա Պողոսյանը, Էլմիրա Անտոնյանը, Անիտա Չախարյանը, Գեղամ Վարդանյանը և ուրիշներ:

1966 և 1969 թթ-ին Տիգրան Պետրոսյանը դարձել է շախմատի աշխարհի չեմպիոն, 1973 թ-ին Երևանի «Արարատ» ֆուտբոլի թիմը՝ ԽՍՀՄ չեմպիոն և գավաթակիր, 1975 թ-ին՝ գավաթակիր, 1971 և 1976 թթ-ին՝ արծաթե մեդալակիր:

1976 թ-ից Երևանում պարբերաբար անցկացվում են շախմատի միջազգային մրցաշարեր (1984-ից՝ Տիգրան Պետրոսյանի անվան):

ՀԽՍՀ-ում հրատարակվել են «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» երկօրյա թերթը (1956 թ., 1990 թ-ից՝ «Մարզական Հայաստան») և «Շախմատային Հայաստան» ամենամսյա հանդեսը (1972 թ-ից):

## Կրթություն և գիտություն

Խորհրդային իշխանության առաջին տարիներին ազգայնացվել են դպրոցները, տպարանները, փակվել են մշակութային-սովորական հաստատությունները, թերթերը. ստեղծվել է պետական միացյալ հրատարակչական համակարգ:

Առաջին 2 տասնամյակներում գործել են անգրագիտության վերացման խմբակներ, բացվել տարրական դպրոցներ, իսկ 1930-ական թվականներից պարտադիր է դարձել համընդհանուր տարրական, ապա՝ 7-ամյա, իսկ 1960-ական թվականների կեսերին՝ համընդհանուր միջնակարգ կրթությունը:

1920–90 թթ-ին ՀԽՍՀ բոլոր բնակավայրերում կառուցվել են դպրոցներ:

1920–30-ական թվականներին ձևավորվել է նաև բարձրագույն կրթության համակարգը, որը հիմնական զծերով պահպանվում է մինչև օրս:

1921 թ-ին վերսկսվել է Երևանի համալսարանի գործունեությունը, որի առաջին ֆակուլտետների հիման վրա հետագայում կազմավորվել են պոլիտեխնիկական (այժմ՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան), բժշկական, գյուղատնտեսական (այժմ՝ ագրարային) և մանկավարժական ինստիտուտները (համալսարաններ): Ավելի վաղ բացվել էին նաև կոնսերվատորիան և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը:

1921 թ-ին Էջմիածնում ստեղծվել է Կուլտուր-պատմական ինստիտուտը, որը 1925 թ-ին վերածվել է Գիտության և արվեստի ինստիտուտի, որտեղ ներգրավվել են տարբեր ոլորտների ճանաչված գիտնականներ, մշակույթի գործիչներ, արվեստագետներ. մեծ մասին Հայաստան է հրավիրել Ալեքսանդր Մյասնիկյանը:

Սկզբնական շրջանում ուսումնասիրություններն ունեին հիմնականում պատմահասարակական ուղղվածություն, իսկ 1920-ական թվականների վերջերին զարգացել են նաև քիմիան, հիդրոտեխնիկան, կիրառական երկրաբանությունը և այլ ոլորտներ:

1935 թ-ին ստեղծվել է ԽՍՀՄ ԳԱ-ի հայկական մասնաճյուղը (ռուսերեն՝ ԱրմՖԱՆ), որի հիման վրա 1943 թ-ին ստեղծվել է ՀԽՍՀ ԳԱ-ն: Գիտական հետազոտություններ են արվել ճյուղային ինստիտուտներում (հայտնի են Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Արմենակ Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի, Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի, Մերգել Մերգելյանի անվան Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտները և այլն) և բուհերի ամբիոններում:

## Գրատպություն և մշակութալուսավորական հիմնարկներ

**Մամուլ:** Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից ՀԽՍՀ-ում սահմանվել է պարբերական մամուլի խստագույն գրաքննություն. մամուլը վերածվել է կոմունիստական կուսակցության խոսափողի, փակվել են անցյալի բոլոր թերթերն ու հանդեսները: Գլխավոր պարբերականներն էին Հայաստանի կոմկուսի կենտկոմի և գավառական ու շրջանային կոմիտեների պաշտոնաթերթերն ու հանդեսները («Կոմունիստ», «Խորհրդային Հայաստան», «Լենինյան ուղիով», «Բանվորական Երևան» և այլն): Կուսակցական մամուլից բացի՝ լույս են տեսել նաև երիտասարդական և մանկապատանեկան («Ավանգարդ», «Պիոներ կան», «Շիժեռնակ»), ժողկրթության բնագավառի («Սովետական մանկավարժ», «Սովետական դպրոց»), գրական-մշակութային («Մուրն», «Նորք», «Նոր ակոս», «Գրական սերունդ», «Գարուն», «Սովետական արվեստ», «Գրական թերթ»), մարզական («Հայաստանի ֆիզկուլտուրնիկ») և երգիծական («Ոգնի») թերթեր ու հանդեսներ: Գիտական հոդվածները հրատարակվել են Մատենադարանի, ԳԱ-ի, ԵՊՀ-ի և մյուս բուհերի գիտական հանդեսներում ու ճյուղային տեղեկագրերում: «Հայրենիքի ձայն» թերթը և «Սովետական Հայաստան» ամսագիրն արտացոլել են Հայրենիք-Սփյուռք կապերը:

**Ռադիո և հեռուստատեսություն:** Հայկական ռադիոյի առաջին փորձնական հաղորդումը հեռարձակվել է 1926 թ-ի սեպտեմբերի 1-ին, պաշտոնական թողարկումները՝ նոյեմբերի 7-ից: 1929 թ-ին ստեղծվել է ռադիոհաղորդումների հանրապետական կառույցը, որի ղեկավարությունը 1931 թ-ին հանձնվել է ՀԽՍՀ ռադիոհաղորդումների կոմիտեին:

1930 թ-ի մարտին գործարկվել են Քանաքեռի ռադիոկայանը և Լենինականի ու 11 շրջկենտրոնների քաղաքային ռադիոհանգույցները: 1953 թ-ին Միուբի (այժմ՝ Բալահովիտ՝ Աբովյանի ենթաշրջանում) ռադիոկայանի նոր համալիրի շահագործման շնորհիվ կայուն ռադիոկապ է ապահովվել տարածաշրջանի երկրների հետ: 1962 թ-ին ՀԽՍՀ բոլոր բնակավայրերը ռադիոֆիկացված էին: 1963 թ-ին գործարկվել են Պուշկինի լեռնանցքի, Մեմյոնովկայի, Նորատուսի գերիզոր հեռարձակիչ կայանները:

Առաջին հեռուստահաղորդումը հեռարձակվել է 1956 թ-ին, իսկ 1957 թ-ին պաշտոնապես բացվել է հեռուստատուրիան: 1971 թ-ից հեռուստահաղորդումները հեռարձակվել են հեռուստակենտրոնի նոր շենքից, ստեղծվել են տեսագրությունների, գունավոր հաղորդումների հնարավորություններ, 1972 թ-ին Երևան-Ռուսթավի նոր ռադիոտելեային գծի գործարկմամբ հնարավոր է դարձել Երևանից հաղորդումներ հեռարձակել Մոսկվա՝ Կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրելու համար: 1977-78 թթ-ին կապի «Օրբիտա» տիեզերակայանի և հեռուստատեսային նոր աշտարակի գործարկումով բարելավվել է հեռուստառադիոհաղորդումների լսելիության որակը:

**Գիրք և տպագրություն:** Հայկական տպագրության խորհրդային շրջանի կարևոր իրադարձություններից էր 1921 թ-ին Երևանում Հայպետհրատի ստեղծումը, որտեղ հայերեն և այլ լեզուներով հրատարակվել է բազմաթիվ գրականություն: Հիմնվել են նաև այլ հրատարակչություններ՝ ԵՊՀ-ի, ՀԽՍՀ ԳԱ-ի, «Լույս», «Գիտելիք» ընկերության, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը և այլն: Չնայած այս շրջանում գրքերը ենթարկվել են խիստ գրաքննության,

այդուհանդերձ, ստեղծվել է բարձրարժեք տպագիր գրաֆոնդ, տպագրվել են հայ և համաշխարհային (թարգմանաբար) դասականների բազմահատոր ու հատընտիր երկեր, ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ, մանկական պատկերազարդ գրքեր, գիտական և գրաքննադատական աշխատություններ, «Հայկական սովետական հանրագիտարանը» (13 հատոր), բազմաթիվ այլ արժեքավոր հրատարակություններ՝ մեծ տպաքանակներով:

Հայերեն գրքեր են տպագրվել նաև Մոսկվայում, Խարկովում, Թբիլիսիում, Բաքվում և ԽՍՀՄ այլ քաղաքներում, սփյուռքահայ գաղթավայրերում:

**Մշակութալուսավորական հիմնարկներ:** Երկրում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել մշակութային-լուսավորական հիմնարկների՝ գրադարանների, թանգարանների, ակումբների և հանգստի գոտիների ստեղծմանը:

Խորհրդային առաջին տարիներից գրադարանները դարձել են պետական. ժամանակի ընթացքում ստեղծվել են ուսումնական, գիտատեխնիկական, արհմիութենական և հանրային բազմաթիվ գրադարաններ:

1921 թ-ից սկսվել են նաև թանգարանային արժեքների հավաքումը, պահպանումն ու հաշվառումը, թանգարանային գիտահետազոտական աշխատանքների, էքսկուրսիաների և դասախոսությունների կազմակերպումը:

1922 թ-ից Հայաստանում բացվել են առաջին ակումբային հիմնարկները, որտեղ ձևավորվել ու գործել են քաղաքական, գրական-գեղարվեստական, կերպարվեստի, թատերական, մարզական և այլ խմբակներ:

Ստեղծվել է գրոսայգիների լայն ցանց, բացվել են հանգստի և սննդի տաղավարներ, կազմակերպվել են տոնահանդեսներ, պարահանդեսներ և այլ միջոցառումներ:

## Լեզու և գրականություն

**Լեզու:** Ժամանակակից արևելահայերենը խորհրդային տարիներին դարձել է պետական լեզու և ստացել հետագա զարգացման, մշակման ու նորմավորման լայն հնարավորություններ: Չարգացել են հայոց լեզվի գործառնությունները և գիտատեխնիկական, տերմինաբանական շրջանակները, մեծացել է գրական լեզվի ազդեցությունը բարբառների ու խոսակցական լեզվի վրա, հարստացել է բառապաշարը՝ բառաստեղծման, թարգմանությունների և փոխառությունների շնորհիվ:

1922 թ-ին գործածությունից հանվել է դասական կամ մեարտայան ուղղագրությունը, և պաշտոնապես ընդունվել է հայերենի նոր ուղղագրությունը, որը մշակել է Մանուկ Աբեղյանը: 1940 թ-ին կատարվել են ուղղագրական մասնակի փոփոխություններ:

1970-ական թվականների կեսերին ԽՍՀՄ-ում ծավալվող ռուսականացման քաղաքականության հետևանքով Հայաստանում վտանգվել է հայերենի՝ որպես պետական լեզվի, կարգավիճակը: Մակայն հասարակական լայն շրջանակների ճնշմամբ 1978 թ-ի ՀԽՍՀ նոր Մահմանադրությամբ հայերենը դարձյալ հռչակվել է հանրապետության պաշտոնական լեզու:

Հայերենի պատմության, համեմատական քերականության, բարբառագիտության, ժամանակակից հայոց լեզվի հնչյունական համակարգի, խոսքի մշակույթի ու տերմինաբանության վերաբերյալ ուսումնասիրություններ են արվել ԳԱ Լեզվի ինստիտուտում (ստեղծվել է 1943 թ-ին), ԵՊՀ-ում և մանկավարժական ինստիտուտում:

**Գրականություն:** Գեղարվեստական գրականության նոր դիմագծի ձևավորումը խորհրդային տարիների հոգևոր կյանքի ամենակարևոր խնդիրներից էր:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ՀԽՍՀ-ում սկսվել է պրոլետարական գրական շարժումը, որի ցայտուն դրսևորումը 1922 թ-ին հրապարակված «Երեքի դեկլարացիան» էր: Նույն թվականի դեկտեմբերին հիմնվել է Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան (միավորում), որը, ղեկավարվելով «գրականության կուսակցականության» սկզբունքով, անդամագրում էր միայն բանվորական միջավայրից ելած գրողներին: Ինչպես պրոլետկուլտականներն ու ֆուտուրիստները (ապագայապաշտներ), այնպես էլ «Երեքի դեկլարացիայի» շուրջ համախմբված գրողները մերժում էին անցյալի գրական-գեղարվեստական ժառանգությունը: 1920-ական թվականների վերջերին և 1930-ականների սկզբներին գրական այդ խմբակցությունները միավորվեցին, և 1934 թ-ին ստեղծվեց Հայաստանի գրողների միությունը:

Հայ գրողներին առաջադրվեցին «նոր հասարակական-բարոյահոգեբանական» գեղարվեստական գրականության ստեղծման խնդիրներ: Գերիշխում էին Խորհրդային Հայաստանին, երկրի արդյունաբերությանը և կոլտնտեսային շարժմանը նվիրված ստեղծագործությունները:

Պրոլետարական գրողներն առաջնորդվում էին դասակարգային պայքարի, հայրենիքի պատմական անցյալի ուրացման, ազգային առանձնահատկությունների անտեսման ապագային գաղափարներով: Նրանք սիրերգությունը համարեցին անհատապաշտություն, հայրենասիրությունը՝ ազգայնամոլություն, պատմության վերհուշը՝ անցյալի իդեալականացում: Այսպիսի ծանր պայմաններում են ստեղծագործել նաև ազգային քննադատական կարգադր ունեցող գրողներ Եղիշե Չարենցը, Ալեսի Բակունցը, Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Վահան Թորոսյանը, Չապել Եսայանը, Վաղարշակ Նորենցը, Լեռ Կամսարը և ուրիշներ, որոնք 1937 թ-ին անհիմն գրպարտությունների պատճառով արքայադատվել են կամ գնդակահարվել:

Հետագա տարիներին հայ գրականությունը զարգացել է այսպես կոչված սոցիալիստական ռեալիզմի սկզբունքներով: Խորհրդային գրականության երակետը կյանքի սոցիալիստական վերափոխման իդեալն էր, ըստ որի՝ սոցիալիստական իրականությունը և մարդկային հարաբերությունները դիտարկվում էին հեղափոխական զարգացման մեջ:

1960–70-ական թվականներին գրական մթնոլորտը փոքր-ինչ մեղմացել է: Հովհաննես Ծիրազը, Պարույր Սևակը, Համո Սահյանը, Սիլվա Կապուտիկյանը, Խաչիկ Դաշտենցը, Հրանտ Մաթևոսյանը, Մուշեղ Գալշոյանը և ուրիշներ խորհրդային գաղափարական գրաքննության պայմաններում կարողացել են ստեղծել խորապես ազգային մտածողությամբ ու հոգեբանությամբ հագեցած գրականություն: Թեպետ սոցիալիստական ռեալիզմը կաշկանդում էր գրականության զարգացումը, բայց և այնպես խորհրդային տարիներին ստեղծվել են համաշխարհային նշանակության այնպիսի արժեքներ, ինչպիսիք են Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Հ. Ծիրազի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Հ. Մաթևոսյանի և ուրիշների ստեղծագործությունները:

Հայ բանասիրության, հին և միջնադարյան, նոր և նորագույն ու սփյուռքահայ գրականությունների ուսումնասիրման, բնագրագիտական, գրականագիտական, գրական տեսական աշխատանքներ են կատարվել ՀԽՍՀ

ԳԱ Գրականության ինստիտուտում (ստեղծվել է 1938 թ-ին), ԵՊՀ-ում և Մանկավարժական ինստիտուտում:

## Արվեստ, ճարտարապետություն և քաղաքաշինություն

**Կերպարվեստ:** 1920–30 թթ-ին երկրում հիմնադրվել են գեղարվեստական միավորումներ ու կազմակերպություններ, որոնք պետք է նպաստեին աշխատավորների և խորհրդային մարդկանց երջանիկ կյանքն արտացոլող կտավների ու քանդակների ստեղծմանը:

Քաղաքներում ու գյուղերում կանգնեցվում էին հեղափոխության առաջնորդ Վլադիմիր Իլիչ Լենինի արձանները: Սկզբնավորվել է «արդյունաբերական» ժանրը՝ վերակառուցվող երկրի հաջողությունները պատկերելու համար (Գարրիել Գյուրջյան, «Ծիրակի ջրանցքի ամբարտակի կառուցումը», 1926 թ., Փանոս Թերլեմեզյան, «Ղափան. պղնձաձուլական գործարան», 1929 թ., և այլն):

1950-ական թվականներին թեմատիկան դարձել է բազմազան. ստեղծվել են «Սասունցի Դավիթ» (1959 թ., քանդակագործ՝ Երվանդ Քոչար), «Միքայել Նալբանդյան» (1966 թ., քանդակագործ՝ Նիկողոս Նիկողոսյան) արձանները, «Անի» (1967 թ., նկարիչ՝ Հենրիկ Միրալյան) կտավը և այլ գործեր: 1953 թ-ից (Իոսիֆ Ստալինի մահից հետո) Հայաստանում զարթոնք է ապրել վերածնության ոգին, հատկապես 1960-ական թվականներից ծաղկել է կերպարվեստը, ձևավորվել է այսպես կոչված «կոշտ» ոճը, որի հետևորդները (Հակոբ Հակոբյան, Մինաս Ավետիսյան և ուրիշներ) քննադատում էին արվեստի ազատ զարգացման խոչընդոտները:

Հայ արվեստագետները, որոշակիորեն զերծ մնալով սոցիալիստական ռեալիզմի ազդեցությունից, ստեղծել են համաշխարհային նշանակության գործեր: Հայ գեղանկարչության նոր դպրոցի ձևավորմանն ու կերպարվեստի զարգացմանը նպաստել են նկարիչներ Մարտիրոս Սարյանը, Ստեփան Աղաջանյանը, Գ. Գյուրջյանը, Հակոբ Կոչոյանը, Սեդրակ Առաքելյանը, Գրիգոր Խանջյանը, Մ. Ավետիսյանը, քանդակագործներ Ե. Քոչարը, Խորեն Տեր-Հարությունը, Հակոբ Գյուրջյանը, Արա Սարգսյանը, Արա Հարությունյանը, Արտաշես Հովսեփյանը և ուրիշներ, ինչպես նաև սփյուռքահայ մի շարք նկարիչներ ու քանդակագործներ:

**Թատրոն:** Խորհրդահայ թատրոնի պատմությունը սկսվում է 1918 թ-ից, երբ Պյատիգորսկում (Ռուսաստան), Օլի Սևույանի նախաձեռնությամբ, ԽՍՀՄ Ազգայությունների կոմիտեն կազմակերպել է հայկական առաջին պետական դրամատիկական թատրոնը: 1919 թ-ին ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ Մոսկվայում հիմնադրվել է Հայկական դրամատիկական ստուդիան (ղեկավար՝ ռեժիսոր Մուրեն Խաչատրյան), իսկ 1920 թ-ին Դոնի Նախիջևանում՝ Ալեքսանդր Աբելյանի նախաձեռնությամբ՝ Հայկական դրամատիկական թատրոնը, որոնք դարձել են ազգային թատրոնի նախահիմքը:

Խորհրդային թատրոնն առաջին հերթին դիտարկվել է որպես սոցիալիստական հեղափոխության նվաճումների քարոզչության, մարքս-լենինյան տեսադրոյթների տարածման, աշխատավորության գեղագիտական հայացքների ձևավորման հզոր ծակ: «Ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական» մշակույթի ու գրականության հիմնադրույթը, որը պետության գլխավոր գաղափարախոսական արժեքներից էր, արտացոլվել է նաև թատրոնում: Չնայած գերիշխող սոցիալիստական ռեալիզմի մեթոդին՝ 1920–91 թթ-ին հայ թատերարվեստն ունեցել է նաև կարևոր ձեռքբերումներ: Խորհրդային շրջանի

թատրոնի տեսական հիմքը Կոնստանտին Ստանիսլավսկու թատերական բարենորոգումներն էին, որոնք նպաստել են ազգային թատերարվեստի զարգացմանը:

Գլխավոր ձեռքբերումը պետական-խաղացանկային թատրոնների համակարգի ստեղծումն էր, որի շնորհիվ զարգացել են ազգային ռեժիսորական և դերասանական արվեստները, ձևավորվել է անսամբլային թատրոնի գաղափարը, մշակվել և կենսագործվել են գեղարվեստական բազմաթիվ ծրագրեր: Արտասահմանյան թատերական նորարարություններն արտացոլվել են հայկական թատրոնում և նպաստել խաղացանկային ճշգրիտ ու բազմակողմանի քաղաքականության ձևավորմանը: ՀԽՍՀ-ում ստեղծվել են Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան (1921 թ.), Պատանի հանդիսատեսի (1929 թ.), Մաքսիմ Գորկու անվան բանվորական (1931 թ.), Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի (1932 թ.), Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային (1935 թ.), Կոնստանտին Ստանիսլավսկու անվան ռուսական (1937 թ.), Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի (1942 թ.), Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական (1968 թ.), Կամերային (1979 թ.), Երիտասարդական-փորձարարական (1979 թ.), Մնջախաղի (1979 թ.) և այլ թատրոններ:

Թատերական կյանքը զարգանում էր նաև մայրաքաղաքից դուրս: 1951 թ-ին ՀԽՍՀ-ում գործում էին 28 շրջանային թատրոններ: Հայաստանում ստեղծվել են նաև ազգային փոքրամասնությունների (1928-89 թթ-ին՝ Երևանի Չարար Չարարյու անվան աղբրեջանական, 1937-47 թթ-ին՝ Հայաստանի քրդական պետական) թատրոններ:

Ազգային թատրոնի առաջընթացը պայմանավորվել է Վահրամ Փափազյանի, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Գուրգեն Չանիրեկյանի, Դավիթ Մայրանի, Լևոն Չոխրաբյանի, Ցոլակ Ամերիկյանի, Արուս Ոսկանյանի, Հասմիկի, Օլգա Գուլազյանի, Վաղարշ Վաղարշյանի, Արուս Արսյանի, Մետաքսյա Միմոնյանի, Բարկեն Ներսիսյանի, Խորեն Աբրահամյանի, Մեդր Մկրտչյանի, Վարդուհի Վարդերեսյանի, Սոս Մարգարյանի՝ դերասանական, Արմեն Գույակյանի, Արշակ Բուրջոյանի, Լևոն Քալանթարի, Վարդան Աճեմյանի, Հրաչյա Ղափլանյանի, Վահե Շահվերդյանի և ուրիշների ռեժիսորական վարպետությամբ:

Թատերարվեստին զուգահեռ զարգացել է նաև կրկեսային արվեստը՝ իր լավագույն ավանդույթներով: 1956 թ-ին ստեղծվել է Հայկական կրկեսի կոլեկտիվը, որի նպատակն ազգային ինքնատիպ կրկես ստեղծելն էր: Այդ բնագավառում իրենց զգալի ավանդն ունեն Վարդանովների ընտանիքը, Վաղարշակ Աբգումանյանը, Լևոն Հայկազունին, Ելենա Ավանեսովան, Նագի Շիրայր, Ստեփան Իսահակյանը, Հմայակ Իսախանյանը, Լեոնիդ Ենգիբարյանը, Սոս Պետրոսյանը և ուրիշներ:

**Կինո:** Ունենալով հանդիսատեսի լայն յարան՝ կինոն առանձնահատուկ դեր է ունեցել խորհրդային գաղափարախոսական համակարգում, որի հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն էր: 1923 թ-ին լուստողկոմատի համակարգում ստեղծվել է Պետֆոտոկինոն:

Խորհրդային առաջին կինոնկարը «Խորհրդային Հայաստան» (1924 թ.) փաստագրական ֆիլմն է: 1925 թ-ին Հայաստան է հրավիրվել կինոռեժիսոր Համո Բեկնազարյանը, որը մշակել է ազգային ուրույն կինոմտածողություն: Հայկինոյի առաջին գեղարվեստական ֆիլմը Բեկնազարյանի «Նամուն» է (1925 թ.): Ազգային կինոն նախ հաջողության է հասել կատակերգության

ժանրում («Շոր և Ծորշոր», 1926 թ., «Մերսիկական դիվանագետներ», 1931 թ., «Կիկոս», 1931 թ., և այլն):

1935 թ-ին Բեկնազարյանն ստեղծել է առաջին հնչուն՝ «Պեպո» ֆիլմը, սպա՝ «Չանգեզուրը» (1938 թ.), որն ազգային պատմության սուբյեկտիվ արտացոլումն է: Նկարահանվել են նաև «Կարո» (1937 թ., ռեժիսոր՝ Արտաշես Հայ-Արսյան), «Լեռնային արշավ» (1939 թ., ռեժիսոր՝ Ստեփան Կևորկով), «Սևանի ձկնորսները» (1939 թ., ռեժիսոր՝ Ամասի Մարտիրոսյան), «Լեռնային հեղեղ» (1939 թ., ռեժիսոր՝ Պատվական Բարխուդարյան), «Անձամբ ճանաչում եմ» (1958 թ., ռեժիսորներ՝ Ս. Կևորկով և Էրազմ Մելիք-Քարամյան) և այլ ֆիլմեր, որտեղ շեշտադրված են ժողովրդի հեղափոխական պայքարն ու հաղթանակի գաղափարը:

Բեկումնային էր Ֆրունզե Դովլաթյանի «Բարև, ես եմ» (1965 թ.) ֆիլմը, որով սկզբնավորվել է հայկական կինոյի նոր ժամանակաշրջանը: Հետագա տարիներին նա նկարահանել է «Երևանյան օրերի խորնիկ» (1972 թ.), «Երկունք» (1976 թ.), «Մենավոր ընկուզենի» (1986 թ.) կինոնկարները:

Նկարահանվել են «Եռանկյունի» (1967 թ.), «Մենք ենք, մեր սարերը» (1969 թ.), «Նահապետ» (1977 թ.), «Կտոր մը երկինք» (1980 թ., չորսն էլ՝ ռեժիսոր՝ Հենրիկ Մայրան), «Արևիկ» (1979 թ., ռեժիսոր՝ Արկադի Հայրապետյան), «Հարսնացուն հյուսիսից» (1975 թ.), «Երջանկության մեխանիկա» (1982 թ., երկուսն էլ՝ ռեժիսոր՝ Ներսես Հովհաննիսյան), «Հնձան» (1973 թ.), «Տերը» (1983 թ., երկուսն էլ՝ ռեժիսոր՝ Բագրատ Հովհաննիսյան), «Հեղնար աղբյուր» (1970 թ., ռեժիսոր՝ Արման Մանարյան), «Կյանքի լավագույն կետը» (1979 թ.), «Հին օրերի երգը» (1982 թ.), «Մեր մանկության տանգոն» (1984 թ., երեքն էլ՝ ռեժիսոր՝ Արթուր Մկրտչյան), «Տղամարդիկ» (1972 թ.), «Հուստ աստղ» (1978 թ., երկուսն էլ՝ ռեժիսոր՝ Էդմոնդ Քեոսայան), «Մարդը «Օլիմպոսից»» (1984 թ., ռեժիսոր՝ Դմիտրի Կեսայանց), «Բամին ունայնության» (1989 թ., ռեժիսոր՝ Հարություն Իսախանյան), «Չայն բարբառոյ...» (1991 թ., ռեժիսոր՝ Վիգեն Չալոբանյան) և այլ գեղարվեստական ֆիլմեր, որոնք ունեն ազգային հստակ նկարագիր ու գեղարվեստական արտահայտչականություն: Ստեղծվել են նաև հեռուստատեսային, վավերագրական ու մուլտիպլիկացիոն ֆիլմեր:

**Երաժշտություն:** Խորհրդային 70-ամյա ժամանակահատվածում մեծ առաջընթաց է ունեցել նաև հայ մասնագիտական երաժշտությունը: Կոմիտասի ստեղծած ազգային երաժշտական լեզվամտածողության հիմքով կազմավորվել և զարգացել են հայկական երաժշտության բոլոր ժանրերը՝ օպերան, բալետը, սիմֆոնիկ ժանրի տարատեսակները, երգը, ռոմանսը և այլն:

Համաշխարհային երաժշտական արտահայտչամիջոցների համակարգը ստեղծագործաբար միահյուսելով ազգային լեզվամտածողության առանձնահատկություններին՝ հայ կոմպոզիտորական դպրոցի ներկայացուցիչները այսպես կոչված «կուլտի երաժշտության» կողքին ստեղծել են ժամանակի և իրականության ճշմարիտ, առողջ կենսասիրությամբ երկեր, որոնք ազգային դասական երաժշտության մնայուն արժեքներից են:

Ազգային երաժշտարվեստի զարգացմանը մեծապես նպաստել են կոմպոզիտորներ Արմեն Տիգրանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, սպա՝ Արամ Իսախանյանի, Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Էդվարդ Միրզոյանի, Էդգար Հովհաննիսյանի, Ղազարոս Մարյանի և ուրիշների բարձրարժեք ստեղծագործությունները: Ազգային երաժշտարվեստում ինքնատիպ գործեր են ստեղծել նաև

Գրիգոր Եղիազարյանը, Ջիվան Տեր-Թադևոսյանը, Արամ Խուրդոյանը, Ալեքսանդր Աճեմյանը, Կոնստանտին Օրբելյանը:

XX դարի ազգային ու համաշխարհային երաժշտության նոր համադրումներով են բնորոշվում Ավետ Տերտերյանի, Տիգրան Մանսուրյանի և ուրիշների երկերը:

**Ճարտարապետություն:** 1920-ական թվականներից, տնտեսության վերականգնմանը զուգընթաց, սկսվել է բնակելի ու հասարակական շենքերի, ջրէկների, ջրանցքների, գործարանների, ֆաբրիկաների և այլ կառույցների շինարարությունը, կազմվել են քաղաքների ու գյուղական բնակավայրերի գլխավոր հատակագծերը, կառուցվել են քաղաքներ և բազմաթիվ գյուղեր: Քաղաքաշինական նոր սկզբունքները (բնակավայրի բոլոր մասերի միասնություն, կենտրոնի ու ծայրամասերի ներդաշնակություն, ռելիեֆի հետ օրգանական կապ և այլն) առաջին անգամ դրսևորվել են 1924 թ-ին՝ Ալեքսանդր Թամանյանի կազմած Երևանի գլխավոր հատակագծում: Բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակման հիմքում արդյունաբերական ու քաղաքացիական շինարարության համաչափ տեղաբաշխման, բնակչության բարեկեցիկ կյանքի ստեղծման, տրանսպորտային, կոմունալ և այլ ծառայությունների զարգացման խնդիրներն էին:

1920–30-ական թվականները նշանավորվել են կառույցների նոր տիպերի (բանվորական ու կոլտնտեսային ակումբներ, բազմաբնակարան շենքեր, մշակույթի պալատներ, ուսումնական, մանկական, առողջապահական, մարզական և այլ շինություններ) ստեղծմամբ: Այդ շրջանի ճարտարապետությանը բնորոշ են կլասիցիզմի ձևերի և հայ ճարտարապետության ավանդույթների ստեղծագործական կիրառումը, մասամբ՝ նաև մոդեռն ուղղության ազդեցությունը, որոնք առավել նկատելի են հասարակական շենքերում: Հետպատերազմյան տարիներին տարածված էր հատկապես բնակելի թաղամասերի համալիր կառուցապատումը: 1955 թ-ից խորհրդային ճարտարապետության մեջ սկսվել է ստեղծագործական, ոճական առանձնահատկություններով ու շինարարության ծավալով զգալիորեն տարբերվող նոր փուլ, որը պայմանավորված էր տիպային նախագծման և զանգվածային շինարարության անհրաժեշտությամբ: Քաղաքների կառուցապատման գործընթաց են ներառել քաղաքաշինական նոր խնդիրներ և սկզբունքներ, սակայն տիպային նախագծերի կիրառումը հնարավորություն չի տվել ստեղծելու ուշագրավ ու բազմազան բնակելի զանգվածներ. կառուցվել են նույնանման շենքեր՝ ճակատային սխեմատիկ լուծումներով:

Մայրաքաղաքի գլխավոր հատակագծից զատ՝ կազմվել են Արզնիի, Ջերմուկի, Հանքավանի, Ծաղկաձորի, Դիլիջանի, Արզականի առողջարանային համալիրների կառուցապատման նախագծերը, կառուցվել են հանգստյան տներ: Աշխատանքներ են կատարվել պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման, դրանք բնակավայրերի կառուցապատման շրջանակ ներառելու համար: Մշակվել և գործողության մեջ են դրվել Էջմիածնի, Լեհինականի, Գորիսի, Դիլիջանի և այլ պատմամշակութային գոտիների նախագծերը, որոնց հիմքի վրա կազմվել են զարգացման նոր՝ ժամանակակից նախագծեր:

## Թուրքիայում իրենց ինքնությունը կորցրած հայերի անկեղծ պատմությունները. մաս 4

Հայրուրավոր տարիներ այս հողերի վրա ապրեցին... Սակայն այս պատմական ողբերգության հետ չբախվեցին:

Իրենց լեզուն, կրոնը, ինքնությունը տարիներ շարունակ ստիպված եղան թաքցնել իրենց հարևաններից, նույնիսկ երեխաներից: Նրանք հայերն են, ովքեր այս հողերի հին ազգերից են...

*Մարթա Սյունք, 20 տարեկան*



Հայրս Աղըյամանի՝ Քահթայի հայերից է, մայրս էլ Գերգերիի ասորական մի ընտանիքից է սերում... Հայրս մանկության տարիներին՝ մինչև 9 տարեկանը, մզկիթ է տարվել-բերվել և կարծել է, որ մուսուլման է: Երբ մեր պապերը ցեղասպանության ժամանակ կոտորվել են, երեխաները վերցվել են գյուղի որոշ մուսուլման ընտանիքների կողմից և «մուսուլմանացման» գործընթացի են ենթարկվել: Սակայն այդ ժամանակաշրջանում էլ, հետագայում էլ բոլորն ամեն ինչ գիտեին: Կրկին նման մի պատմությունից հայրս փողոցում է իմացել, որ հայ է: Երբ ընկերները «գլավուր» են ձայնել, տուն գնալով հորը հարցնում է, թե գլավուրն ինչ է: Իմանում է, որ հայ է, ինչը թաքցվել է մինչ այդ պահը, և որ մանկուց մուսուլմանի պես է մեծացել: Սա իմանալուց հետո հայրս ցանկանում է ապրել իր արժեքներով և իր ցեղն էլ այդ արժեքների հիման վրա շարունակել: Եվ կյանքը շարունակում է որպես քրիստոնյա: Մեր բարեկամների մեջ կան նաև այնպիսիները, ովքեր հասարակական ճնշման պատճառով դեռ մուսուլմանի պես են ապրում: Սակայն հայրս սա չի նախընտրում և ասորի աղջկա՝ մորս հետ է ամուսնանում: Մինչև 3 տարեկան դառնալս մնում ենք Աղըյամանում, իսկ հետո տեղափոխվում ենք Ստամբուլ:

Մենք ըստ էության հայ ենք, ըստ էության ասորի ենք, ըստ էության Թուրքիայի բնակիչ ենք, բայց ոչ մեկն էլ չենք Թեև հայրս ծագումով հայ էր, մորս հետ ամուսնանալուց հետո ասորիացիվում է: Քանի որ չկա մեկը, ով տեր կանգնի հայերին: Հայրս էլ միշտ ասում է. «Ես ասորիություն անող հայ եմ»: 1915 թ. և հետո ցիր ու ցան եղած հայերին ասորիներն են տեր կանգնում: Եվ նրանք էլ մուսուլմանականացման փոխարեն ասորացում են նախընտրում: Սա մեզ համար իրականում շատ ավելի խճճված իրավիճակ է: Քանի որ մենք ըստ էության հայ ենք, ըստ էության ասորի ենք, ըստ էության Թուրքիայի բնակիչ ենք, բայց ոչ մեկն էլ չենք: Բոլորն ենք, սակայն ոչ մի կաղապարի մեջ չենք կարողանում տեղավորվել:

## Ատրերեն սովորեցի, սակայն դպրոց չունենք

Ատրական մշակույթի ծանոթանալու համար ատրերեն սովորեցի, սակայն մենք մի դպրոց անգամ չունենք: Քանի որ հույներն ու հայերն ավելի մեծ համայնք են, այս հարցում ավելի շահեկան վիճակում են: Այն պատճառով, որ դպրոց չունենք, կարողանում ենք կրթություն ստանալ միայն եկեղեցիներում: Եթե միայն հայ լինեմ, կարող եմ հայկական դպրոցում սովորել, սակայն որպես հայկական արմատներով ասորի՝ պետական դպրոցներում սովորելն ինձ որևէ օգուտ չի տալիս:

Երբ լիցեյում ասում էի, որ ասորի եմ, ընկերներս չգիտեի, թե ինչ է եղել, սակայն հետաքրքրվում էին: Հայերի նկատմամբ լուրջ նախապաշարմունքների պարագայում երբ ասում էի՝ ասորի եմ, ավելի դրական ընդունելություն էի գտնում: Երբ սկսում էի հայերի հետ կապված որևէ բան ասել, գիտեի, որ ասելու են՝ «Ի՞նչ կարիք կա: Արդեն իսկ գիտենք, որ դավաճան են»: Սակայն երբ առանց որևէ գաղափարի վրա համառեցի իմ իմացածն եմ պատմում, դիմացինս էլ իր որոշումն արդեն կայացրած է լինում:

## ԵՐԳՎԵՑԻ, ՈՐ ՉԵՄ ԼՈՒԵԼՈՒ

*Ոչ թե Մեղծեմ, այլ Մարթա*

Անձնագրումս անունս Մեղծեմ է նշված: Սակայն երբ ընտանիքիս աջակցությամբ սկսեցի կիրառել մկրտության անունս՝ Մարթան, փոխեցի նաև անձնագրում նշված անունը: Անշուշտ նախակրթարանի և լիցեյի ժամանակաշրջանից ինձ միշտ Մեղծեմ անունով են դիմել: Այս ժամանակաշրջանում, շնորհիվ նրբագաց մարդկանց և այն տպավորության, որ ես դրանից ավելի գոհ եմ լինում, ի վերջո Մարթան ավելի շատ նախընտրեցի: Երբ նախակրթարանում էի, հայ լինելու թաքցնելու կարիք էի զգում, քանի որ ամաչում էի: Այդ ամաչկոտության պատճառով որևէ մեկի հետ չեմ կիսվել: Մի օր երբ ընկերս թերթ էր կարդում, ընթերցեց «Մպանված հայ վիժվածք Հրանտ Դինք» արտահայտությունը: Կարող եմ ասել՝ սա դարձավ վերջին դեպքը, որ ես լուռ մնամ: Երդվեցի, որ սրանից հետո նման որևէ դեպքի նկատմամբ լուռ չեմ մնա: Այս պատճառով Հրանտ Դինքն ինձ համար բեկումնային կետ է: Լիցեյ գալով՝ սկսեցի բաց կերպով ապրել իմ ինքնությամբ ու պատմել դրա մասին: Նույնիսկ կրոնի դասերին ուսուցիչների հետ բանավիճել եմ: Ցավս էր և՛ իմանալ ամեն ինչի մասին, ինչ խոսվում էր, և՛ դրանց պատասխանը տալ: Եվ ամենակարևորը՝ կոտրել մարդկանց մեջ առկա այս նախապաշարմունքը: Այս պատճառով միշտ պայքարեցի, խոսեցի, լռեցի: Այս դիմադրությունը և՛ ինձ, և՛ դիմացիններին համար կարևոր դրական արդյունքներ ծնեց: Եվ ես չլռեցի, և՛ իմ իմացած ճշմարտությունը պատմեցի նրանց: Լիցեյում ընկերներս, ուսուցիչներս, ներառյալ նաև տնօրենի օգնականը, բոլորը սովորեցին էին ինձ Մարթա կոչել: Օրինակ՝ հորս անունն էլ անձնագրում մինչև հիմա Ռամազան է նշված: Անշուշտ, սովորությունները հեշտությամբ չեն փոխվում, սակայն մկրտվելուց հետո Յուդաիզմ անունը ստացավ, մենք էլ մեր մեջ սկսեցինք այդ անունը կիրառել:

## Ի՞նչ անեն հայկական ընտանիքները


Ընտանիքս տեղյակ չէր, որ նախակրթարանում ես թաքցրել եմ իմ ինքնությունը: Եթե իմանային, հաստատ կբարկանային: Այսինքն՝ անհրաժեշտ է, որ հայկական ընտանիքները նախ իրենք իրենց ճանաչեն, հետո էլ այդ ինքնության հիման վրա օժանդակեն իրենց երեխաներին: Իմ այս դիմադրության համար ամենամեծ աջակիցը ընտանիքս էր:

## Հեռանա՛լ Թուրքիայից. խոսքիցս հրաժարվել չի լինի. եթե վատր կա, անշուշտ, լավն էլ կա

